2000, ՄԱՅԻՍ Ա, ԹԻՎ 9 (77)

Քրիստոնեայ Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

Խոյակ Դվինից. 5-6 դդ.

Հարց-Բյուրանը՝ Կյանքի Հաղթանակ

Այս տարվա ապրիլի 23-ին Հայաստանյայց Առաքելական Մուրք Եկեղեցու բոլոր զանգերը ղողանջեցին՝ ազդարարելով.

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց. ձեզ եւ մեզ մեծ աւետիս»:

Բայց արդյոք ազգովի կարողացա՞նք այս մեծ ավետիսի իրական խորհուրդը ճշմարտապես ընկալելով՝ միաձայնել.

«Օրհնեալ է յարութիւնը Քրիստոսի»:

Արդյոք կարողացա՞նք դաս առնել հարության խորախորհուրդ լույսից՝ մեր անցած կյանքն ու պատմական ժառանգությունը վերաքննելով ու վերաիմաստավորելով: Արդյոք փորձեցի՞նք հարության խորհրդի հավատով մեր նյութական մարմնի մեջ նորոգել ու զորացնել հոգեւորի զարգացումը, այն կառույցի, որը ոչ միայն անհատին, այլեւ հասարակությանը, ժողովրդին ու ազգին է կամրջում աստվածային, հավերժականի հետ: Հավատի զորությունը վերացական ըմբռնում չէ, հավատն անկարելին կարելի դարձնելու հրաշագործ լույս է: Եթե չկա այդ լույսը, ապա դժվար թե կարողանանք գտնել մեղքից ազատվելու այնպիսի հիմունքներ, որ մեզ առաջնորդեն դեպի լուսավոր ու սուրբ հարություն. ինչպես կանք, այնպես էլ պիտի մնա՞նք նյութական աշխարհի ճորտը: Ըմբռնեցի՞նք արդյոք, որ ընդունելով աստվածային հեղինակությունը՝ կարող ենք հասնել հասարակական այնպիսի ձեւի, որ վեր է նեղ ու ճղճիմ, եսակենտրոն ու եսապաշտ, ոչ միայն սեփական անձը, այլեւ ազգն ու ժողովուրդը մշտապես դեպի մահը տանող մարդկային ինքնաբավ բանականությունից: Աստծո Որդու, որ նաեւ որդին է մարդկային ցեղի, Լույս Հարության խորհրդով համակվելն այնպիսի կենսակերպ, հարաբերությունների այնպիսի դրություն է ենթադրում, ուր յուրաքանչյուր անդամ կատարում է իր դերն ու նշանակությունը, իր պարտականությունն ու առաքելությունը ոչ թե հանուն իր անձի շահի, այլ Տիրոջ անվան փառքի, ժողովրդի ու հայրենիքի արժանապատիվ կյանքի համար:

Հարության խորհուրդն առավել հստակ, առավել հաստատուն է դարձնում մարդ արարածի խոհերի, մտորումների, ընկալումների խորքը, վերածում դրանք գիտելիքների, իմացությունների համակուռ քննության, ուր փորձում ես կշեռքի նժարին դնել քո ապրած ողջ կյանքը, առածն ու տվածը: Հիսուս Քրիստոսի երկրային ողջ կյանքը՝ ծննդից մինչեւ մահ, մահից մինչեւ հարություն, գերագույն օրինակ է ճշմարիտ մարդկային կյանքի: Յուրաքանչյուր դրվագ իր գործերով, գաղափարներով, առաքելությամբ, քարոզով եւ վերջապես մարդ արարածին բերած իր հոգեշինությամբ մի ողջ ժամանակ է ժամանակի մեջ, ապրված կյանք՝ կյանքի մեջ, հարություն՝ հավերժության մեջ: Այս գիտակցությամբ ապրեց հայը դարեր շարունակ, այս գիտակցությամբ ու քրիստոնեական իր անխառն հավատով դիմագրավեց բազում փորձությունների, տարաբնույթ զրկանքներ ու դժվարություններ, նվաստացումներ ու մինչեւ իսկ եղեռն, սակայն մնաց իր ինքնատիպ նկարագրի ու առիթներ ունեցող մշակույթի տերը, պահեց-պահպանեց իր չափազանց սթափ, առողջ աշխարհայացքը:

Մեր դժվարին ու անհանգիստ այս օրերում, երբ խիստ անհրաժեշտ է մարդկանց, կուսակցությունների, իշխանական թեւերի միջեւ փոխըմբռնման որեւէ լուծելի ձեւի մշակումը, արդյոք փորձո՞ւմ ենք այն որոնել նաեւ ճշմարտության ակունքներից սկիզբ առած, առաքելահիմն Եկեղեցու նահապետական, հովվապետական կառույցի ավանդույթներում: Մեր պատմության մեջ գրանցում ստացած ամենաբախտորոշ իրադարձությունները տեղի են ունեցել այն ժամանակ, երբ կայացրած որոշումը, քայլը լուսավորված է եղել Աստծո հարուցյալ Որդու հանդեպ անվարան հավատով, Նրա թափած արյան ու խաչի խորհրդով: Եթե մի օր հանկարծ այդ խորհրդով չլուսավորվեր Տրդատ Գ թագավորը, որի կերպարը, ի դեպ, շատ բաներով աղերսվում է Սավուղ-Պողոս առաքյալի հետ, եթե այդ խորհրդի լույսով չտոգորվեին Վռամշապուհ արքան ու Սահակ Պարթեւ կաթողիկոսը, Վարդանանց, Սարդարապատի, Բաշ-Ապարանի, արցախյան հերոսամարտի մասնակիցները, ապա այսօր իրականացած չէինք ունենա մեր դարերի երազանքը՝ անկախ պետականությունը, չէր լինի այս մայիսյան օրը, որ մեր պատմության մեջ կմնա որպես մի հերոսական էջ եւս, որպես Արցախ եւ Հայաստան աշխարհի համար խիստ ռազմավարական տեղանք հանդիսացող Շուշի քաղաքի ազատագրման օր:

Երկհազարամյա քրիստոնեական ավանդույթներ ունեցող մեր ժողովրդի համար հարության խորհուրդը հավերժության ու արժանապատիվ ապրելու հիմնական գրավականն է:

Հարությունը մահվան պարտությունն է:

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի այցը Թբիլիսի

Մայիսի 9-ի վաղ առավոտյան Ն. Ս. Օ. Տ. Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը պաշտոնական եռօրյա այցով մեկնեց Թբիլիսի:

Վեհափառ Հայրապետի անդրանիկ այցը Թբիլիսի նպատակ ունի զորացնելու հայ եւ վրաց եկեղեցիների կապերն ու հարաբերությունները, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի օրհնությունը տալու վիրահայությանը:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Հայ Առաքելական Եկեղեցու Արմավիրի թեմի առաջնորդի պաշտոնակատար Տ. Գրիգորիս արք. Բունիաթյանը, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի գլխավոր քարտուղար Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Ուկրաինայի թեմի առաջնորդ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը, Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը, Մայր Աթոռի քարտուղարության տնօրեն Տ. Արշակ աբդ. Խաչատրյանը, Տ. Դուկաս աբդ. Զաքարյանը՝ իբրեւ գավազանակիր եւ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ Վլադիմիր Բարխուդարյանը:

Հայաստանում Նորին Սրբությունը կանգ առավ Հաղպատի վանքում եւ Հաղթանակի օրվա առիթով հոգեհանգստյան արարողություն կատարեց Հայրենական մեծ պատերազմի եւ արցախյան գոյամարտի բոլոր զոհերի հիշատակին:

Ժամը 11-ին հայ-վրացական սահմանագլխին Ամենայն Հայոց կաթողիկոսին մեծ շքախմբով դիմավորեցին Իլյա երկրորդ վրաց կաթողիկոս-պատրիարքը, վրաց միտրոպոլիտներ, Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գեւորգ արք. Սերայդարյանը, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գեորգի Խոսրոեւը: Ողջույնի եւ բարիգալստյան մաղթանքից հետո դիմավորողների երկարաձիգ ավտոշարասյան ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետն ուղեւորվեց Թբիլիսի: Ճանապարհին Հայոց կաթողիկոսը չնախատեսված կանգառ ունեցավ Մառնեուլի շրջանի Շահումյան հայկական գյուղում, ուր Նորին Սրբությունը հայրապետական իր օրհնությունը տվեց Հայոց Հայրապետին դիմավորելու ելած շահումյանցիներին:

Կեսօրից հետո պատրիարքարանում տեղի ունեցավ հայ եւ վրաց գույգ հովվապետների հանդիպումը:

Երեկոյան Ամենայն Հայոց կաթողիկոսն ու վրաց կաթողիկոս-պատրիարքը Թբիլիսիի պետական համալսարանում հանդիպում ունեցան համալսարանի ռեկտորի հետ, ապա այցելեցին համալսարանին կից գտնվող եկեղեցի, որտեղ վրաց պատրիարքը Վեհափառ Հայրապետին նվիրեց վրաց եկեղեցու սրբերից Դավիթ Շինարարի սրբապատկերը:

Նույն օրը Նորին Սրբությունը Թբիլիսիի Հաղթանակի այգում ծաղկեպսակ դրեց Անհայտ զինվորի գերեզմանին:

Մայիս 10-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գեւորգ արք. Սերայդարյանի եւ Վրաստանում ՀՅ դեսպան Գեորգի Խոսրոեւի ուղեկցությամբ մեկժամյա հանդիպում ունեցավ Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի հետ: Պրն. Շեւարդնաձեն բարձր գնահատեց վիրահայ համայնքի դերը Վրաստանի կյանքում: Իր հերթին կարեւորելով հայ-վրացական դարավոր բարեկամությունը՝ Ամենայն Հայոց կաթողիկոսը նշեց վրացահայերի խնդրանքը՝ Թբիլիսիում հայ մշակույթի գործիչների պանթեոնի պահպանմանը պատշաճ ուշադրություն դարձնելու վերաբերյալ: Վերջինիս առիթով Վրաստանի նախագահը Նորին Սրբությանը խոստացավ անհրաժեշտ հոգատարություն ցուցաբերել նշված խնդրին:

Մայիսի 10-ին Նորին Սրբությունն Իլյա Բ վրաց պատրիարքի ուղեկցությամբ այցելեց Ձվարիի (Ս. Խաչ) վանք, ապա Մցխեթիի հին պատրիարքարան եւ Սվետիցխովելի տաճար:

Նույն օրը՝ երեկոյան, ի պատիվ Վեհափառ Հայրապետի՝ Հայաստանի դեսպանատանը տեղի ունեցավ ընդունելություն, իսկ Թբիլիսիի հայկական թատրոնում Նորին Սրբության այցը ողջունեցին եւ Հայոց Հայրապետի օրհնությունն ստացան կիրակնօրյա դպրոցների սաները, վրացահայ մշակութային գործիչներն ու մտավորականները: Ծանոթանալով հայ համայնքի հոգսերի եւ մտահոգող խնդիրների հետ՝ Հայրապետը խոստացավ իր աղոթքներով եւ ամենայն աջակցությամբ միշտ սատարել նրանց:

Շարունակությունը՝ էջ 2

Սկիզբը՝ էջ 1

Մայիսի 11-ին, շարունակելով այցը Վրաստան, Ամենայն Հայոց կաթողիկոսն այցելեց Թբիլիսիի Ս. Գեւորգ առաքելոդանգիստ հայոց եկեղեցի, ուր Վեհափառ Հայրապետին դիմավորեց վրացահայերի հոծ բազմությունը: Հայրապետական իր օրհնությունը տալով վիրահայոց թեմի հավատավոր զավակներին՝ Նորին Սրբությունը հորդորեց նրանց հավատարիմ մնալ հայրերի հավատքին եւ ազգային ավանդույթներին: Հոչակավոր Հովնաթանյանների որմնանկարներով զարդարված՝ 19-րդ դարի եկեղեցում Վեհափառ Հայրապետը թողեց իր նվերը՝ Սբ. Աստվածամոր պատկերով կտավ, որը դրվեց եկեղեցու Սբ. Սեղանին: Եկեղեցու բակում Վեհափառ Հայրապետը կանգ առավ Սայաթ-Նովայի շիրիմի առջեւ եւ հոգեհանգստյան աղոթք առաքեց առ Աստված:

Վեհափառ Հայրապետն այցելեց նաեւ Հավլաբարի Սբ. Էջմիածին եկեղեցի եւ խոցավանքը: Խոցավանքում, ուր ամփոփված են հայոց մեծ երախտավորներ Թումանյանի, Բաֆֆու, Մուրացանի, Նար-Դոսի, Եկմալյանի եւ այլոց շիրիմները, Վեհափառ Հայրապետը կատարեց հոգեհանգստյան արարողություն:

Մայիսի 12-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը, ավարտելով անդրանիկ այցը Վրաց Ուղղափառ Եկեղեցու գահակալ Իլիա Բ կաթողիկոս-պատրիարքին եւ վիրահայոց թեմ, վերադարձավ Մայր Աթոռ Սբ. Էջմիածին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Սիրելի հայորդիք:

Մայիսի 9-ը կրկնակի տոն է մեր ժողովրդի զավակաց համար՝ հաղթանակի նվիրական օր, որ իր խորհրդով միավորում է ֆաշիզմի դեմ երկրորդ համաշխարհային պատերազմում ծեռք բերված պանծալի հաղթության եւ Արցախյան պատերազմում Շուշիի ազատագրության սուրբ հիշատակները:

55 տարի է անցել այն օրից, երբ լռեցին համաշխարհային աղետաբեր պատերազմի որոտները, եւ բռնության, անօրենության ու չարիքի դեմ ելած բազում ժողովուրդների թվում փոքրաթիվ հայ ժողովրդի քաջարի մարտիկները եւս իրենց «սուրը փառքով դրեցին պատյան»: Հայրենաց նվիրյալ, ազատության ու արդարության պաշտպան նրանց ոգին որպես նախնյաց սրբազան ժառանգություն, անթեղվեց իրենց որդիների ու թոռների հոգիներում եւ բոցավառվեց Արցախի ազատագրական պատերազմում մայիսյան եւս մեկ հաղթություն պարգեւելով մեր ժողովրդին:

Մայիսի 9-ի հաղթապակ օրվա առիթով, հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, շնորհավորում ենք եւ հայրապետական մեր օրհնությունը հղում համայն մեր ժողովրդի զավակաց, Հայրենական մեծ պատերազմի բոլոր մասնակիցներին եւ Արցախյան պատերազմի ազատամարտիկներին:

Հավերժ փառք մահին մահով հաղթանակած եւ կյանքը փառքով պսակած հերոսներին:

Թող ոչինչ եւ երբեք չխամրեցնի հայրենյաց պաշտպանի անմնացորդ Ձեր ծառայության բարձրանուն փառքը:

Խաղաղութիւն եւ Սէր Տեառն մերոյ ընդ մեզ ամենեսեան, ամէն:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Օծվեց Դվինի Սբ. Հարություն եկեղեցին

Մայիսի 3-ին՝ առավոտյան, Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը հոգեւոր դասի ուղեկցությամբ մեկնեց Արարատի մարզ՝ օծելու Ներքին Դվինի Սբ. Հարություն նորակառույց եկեղեցին:

Պատմական Դվին կաթողիկոսանիստ մայրաքաղաքում՝ Հայոց Հայրապետին դիմավորեցին աղ ու հացով, եկեղեցու դողանքներով ու «Հրաշափառի» երգեցողությամբ: Այստեղ էին Արարատի մարզպետ Հովիկ Աբրահամյանը, եկեղեցու բարեբար՝ նախկին դվինցի Սամվել Տիգրանյանը, մարզային իշխանության ներկայացուցիչներ, բազմաթիվ դվինցիներ:

Ձեռամբ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կոջոյանի՝ օծվել էին եկեղեցու սյուները, մկրտության ավազանը: Հայոց կաթողիկոսը սրբալույս մյուռոնով օծեց եկեղեցու սեղանը եւ խորանը:

Նորակառույց եկեղեցու օծման ուրախ ու բերկրալի առիթով Վեհափառ Հայրապետն իր շնորհավորանքը, պատգամն ու օրհնությունը հղեց բոլոր ներկաներին. դվինցիներին՝ վստահությամբ, որ երբեք ու երբեք անհոգություն չպիտի դրսեւորեն հայրենական սրբությունների նկատմամբ, եկեղեցու բարերարին, որի նվիրատվությամբ վեր է խոյանում արդեն երկրորդ եկեղեցին, մարզային իշխանություններին, որ ըստ ամենայնի՝ իրենց աջակցությունն են բերել եկեղեցու կառուցմանը:

«Հավատում ենք, որ ազգի, հայրենիքի, մեր ժողովրդի հարատեւությունը, նրա բարօր կյանքը, լուսավոր գալիքը պայմանավորված են մեր անսասան հավատքով՝ հանդեպ մեր հայրերի սրբազան ժառանգությունները, հանդեպ Քրիստոսի Սբ. Ավետարանը, Նրա լույս վարդապետությունը»,- ասաց Նորին Սրբությունը՝ հորդորելով հասու լինել այդ ճշմարտությանը, որը եւ ժողովրդի գոյության ու հարատեւության հիմքն է:

Ապա նորակառույց Սբ. Հարություն եկեղեցում մատուցվեց առաջին պատարագը: Պատարագիչն էր Ուկրաինայի թեմի հայոց առաջնորդ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը: Կատարվեց նաեւ հոգեհանգստյան արարողություն՝ հին եւ նոր հանգուցյալների եւ բարերարի ննջեցյալ հոր հիշատակին:

Հավարտ Սբ. Պատարագի եկեղեցու բակում տեղի ունեցավ ժողովրդական տոնախմբություն:

Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի տեղեկատվության համակարգ

ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐՆԵՐԸ

ԼՈԿ ՆՅՈՒԹԵՂԵՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ ՉԵՆ

«Եւ աշակերտեալք ի սրբոց առաքելոցն՝ ուսաք փառաւորել զՔեզ ի տաճարի սրբութեան Քո...»:
(ՇԱՐԱԿՆՈՑ)

Հայաստանյայց Ս. Եկեղեցու «Տօնացոյցի» համաձայն՝ Ս. Զատկին հաջորդող երկրորդ կիրակին (այս տարի՝ մայիսի 7-ը) կոչվել է Աշխարհամատրան կամ Կանաչ կիրակի: Այս կիրակի, ի դեմս Երուսաղեմ քաղաքի Վերնատան, Հայոց Եկեղեցին տոնում է աշխարհում առաջին քրիստոնեական մատուռի, նյութեղեն տաճարի, եկեղեցու հաստատման հիշատակը: Ահավասիկ այդ առաջին մատուռն էլ դառնում է նախակարապետը, մայրն այսօրվա մեր հոյակերտ տաճարների, տաճարներ, որտեղ Քրիստոս Աստծո հավատացյալներս (ինչպես առաքյալներն ու Աստվածորդու մյուս հետեւորդները Վերնատանը) ժողովվելով՝ Սուրբ Եկեղեցու հոգեպարար ու սրբազան խորհուրդների միջոցով հանապազ հաղորդակցվում ենք Ամենասուրբ Երրորդությանը, ըմբոշխնում ենք Սուրբ Հոգի Աստծո շնորհները եւ բաղարջ հացի ու անապակ գինու կերպարանքի տակ՝ սիրով, հավատքով ու երկյուղով հաղորդակցվում մեր Տիրոջ փրկագործ սուրբ մարմնին ու սուրբ արյանը:



Սկզբից եւեթ՝ տակավին քրիստոնեության արշալույսին, անհրաժեշտություն է զգացվել ընդհանրական աստվածապաշտություն կատարելու համար հատուկ հավաքատեղիներ ունենալը: Եվ որովհետեւ մինչեւ Դ դար քրիստոնեությունը հալածական կրոն էր, ուստի մինչեւ չորրորդ դար ընդհանրական աստվածապաշտության վայրերն աչքի չէին ընկնում իրենց յուրահատուկ տեսքով ու կառուցվածքով. քրիստոնյաներն իրենց պաշտամունքը կատարում էին տներում, քարայրներում, կատակոմբներում եւ այլ վայրերում: Սակայն սկսյալ Դ դարից, երբ Աստծո ողորմությամբ ու շնորհով աշխարհն ու մարդկությունը խոնարհվեցին քրիստոնեական լույս հավատքի վեհության առջեւ, Քրիստոս Աստծո պաշտամունքն այլեւս տեղափոխվեց հատուկ այն փայտաշեն ու քարաշեն մատուռներն ու եկեղեցիները, որոնք հիմնարկեքից իսկ օրհնվում ու օծվում էին եւ ըստ այդմ՝ թե՛ իրենց ճարտարապետական հորինվածքով եւ թե՛ իրենց խորհրդաբանությամբ էապես զանազանվում մյուս շինություններից ու կառույցներից. նյութեղեն տաճարները, երբ սրբալույս մյուռոնով օծվում են, դառնում են սոսկ նյութական կերտվածք լինելուց: Տեղի է ունենում ՆՅՈՒԹԻ ՀՈԳԵՂԻՆԱՑՈՒՄ, այսինքն՝ անճառելիորեն նյութին է միանում աստվածային ու երկնային շնորհը. չէ՞ որ Սուրբ Հոգին նախ Վերնատունը լցրեց հողմով (իմա՛ շնորհներով) եւ ապա հրեղեն լեզուների կերպարանքով իջավ առաքելոց ու մյուսների վրա (Գործք, Բ, 2-3):

Ահավասիկ այսօր, առավել քան երբեւէ, մեր Մայր Եկեղեցու փառախում ի հայտ են եկել որոշ գառնազգեստ գայլեր, որոնք միայն վերջերս հայտնաբերելով «Աստուածաշունչ» մատյանը՝ «հավկնում են նոր «առաքյալների» փետուրներով զարդարվել» եւ ըստ այդմ՝ իրենց հարձակման թիրախ դարձնել ոչ միայն մեր առաքելական ու առաքելահաստատ ավանդություններն ու կարգերը, այլեւ մեր հոյակերտ տաճարներն ու մատուռները՝ բարբաջելով՝ իբր «եկեղեցու նյութական շինությունը՝ տաճարը, լոկ սովորական մի կառույց է»: Սակայն ինչպես միշտ, այս անգամ էլ այդ «գազան հերձվածողները» չարաչար սխալվում են:

Եկեղեցական սուրբ հայրերի վկայությունների համաձայն՝ Աստծո տանը՝ սուրբ եկեղեցում, հանապազ անճառելիորեն ներգործում է Սուրբ Հոգին: Ըստ այդմ էլ՝ **«Եկեղեցուց ներս ամեն ինչ խորհուրդ է, սիմվոլ. ո՛չ քարն է քար, ո՛չ փայտը՝ փայտ, ո՛չ աղոթքը՝ լոկ խոսք, ո՛չ երաժշտությունը՝ պարզ երգ, ո՛չ էլ Ս. Պատարագի հացն ու գինին՝ հաց ու գինի»** (Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն Հայոց): Այս ամենից զատ, սուրբ եկեղեցում, Տիրոջ իսկ վկայությամբ, **«Իմ աչքերը բաց կլինեն, եւ Իմ ականջները՝ սուր, որ լսեմ այս տեղում կատարվող աղոթքը: Ահա ընտրեցի եւ սրբագործեցի այս Տունը, որպեսզի Իմ անունն այստեղ լինի հավիտյան, Իմ աչքերն ու սիրտը այստեղ լինեն ընդմիշտ»** (Բ Մնաց., Է, 15-16): Նաեւ՝ **«գրված է Իմ տունը աղոթքի տուն պիտի կոչվի»** (Մատթ., ԻԱ, 13):

Արդ, եթե Տերն Իր սրբերին առարկայական հայտնություններով պատվիրեց, որպեսզի նրանք ընդհանրական աստվածապաշտության համար տաճարներ կառուցեն, ապա այն մտածումը, թե դրանք «լոկ սովորական կառույցներ են», ինքնին անմտություն է եւ անկասկած՝ դիվային մոլորության արդյունք:

Նախ՝ քրիստոնեական տաճարները հայտնությամբ եւ Հին Կտակարանով են ավանդված, եւ դրանց ստվերական օրինակներն էին Նոյան տապանը, Մովսեսի Վկայության խորանը եւ Սողոմոն արքայի տաճարը: Երկրորդ՝ եթե Հին Ուխտի տաճարում մեղաց թողության ու քավության համար եզներ ու զվարակներ էին զոհաբերվում, եւ դրա հետ մեկտեղ Տիրոջ զորությունն ու փառքը միշտ առկա էին նրանում, ապա որքա՞ն առավել է մեր սուրբ եկեղեցին, քանի որ այստեղ ոչ թե անբան կենդանիներ են ողջակիզվում, այլ Աստծո Անարատ Գառը՝ Միածին Որդի՛ն է պատարագվում եւ Իր սրբարար ու փրկչական սուրբ մարմինն ու սուրբ արյունը բաշխում Իրեն հուսացող բոլոր հավատացյալներին: Միաժամանակ նշենք, որ եկեղեցում պահվող ու գործածվող բոլոր ծիսական առարկաները, օծված ու օրհնված լինելով, իրենց շնորհակրությամբ ու խորհրդակրությամբ մեզ մղում են երկնային, իմանալի աշխարհի հայեցողության. **«Եկեղեցում կարգված զանազան վարագույրներն ու տարատեսակ ձեւերը... իմանալի եւ աննյութական իրերի խորհրդանիշն են, որ մեզ վեր են մղում դեպի իմանալին»** (Ս. Գիոնիսիոս Արիսպագացի):

Ի վերջո, քանի որ Աստծո սուրբ տաճարում անճառելիորեն ներգործում է Սուրբ Հոգին, ապա եկեղեցին սկզբունքորեն մաքրագործող, սրբացնող եւ Բարձրյալ Աստծո հետ ադամորդու հաշտությունը կյանքի կոչող մի հաստատություն է. արդարեւ այն «ԵՐԿԻՆՔ Է ԵՐԿՐԻ ՎՐԱ»: Այդ պատճառով եթե որեւէ **«մեկն Աստծո տաճարն ապականի, Աստված էլ նրան պիտի ապականի, որովհետեւ սուրբ է Աստծո Տաճարը»** (Ա Կորնթ., Գ, 16):

Ուստի եւ մենք, որ տերն ու տնտեսն ենք աստվածապարգեւ այդ հրաշակերտ տաճարների ու լույս խորանների, այլեւ քանի որ գիտենք նրանց իմաստն ու նշանակությունը մեր կյանքում, որքա՞ն առավել պետք է ոչ թե հպարտանանք նրանով, որ դրանք մերն են եւ մեր շինարար մտքի ու բազկաց ուժի արդյունքը, այլ հույժ անհրաժեշտ է, որ մենք՝ թե՛ աշխարհական եւ թե՛ հոգեւորական, նախ եւ առաջ ուսանենք Աստծո տանը մեզ պահելու կերպը, որպեսզի ոչ միայն չնմանվենք անզգամներին, այլ նաեւ պատճառ չլինենք նորադարձ մեր քույրերի ու եղբայրների զայթակղվելուն: Այս առումով եւս առավել կարեւորվում է քահանա հայրերի պահվածքն ու կեցվածքը. որքա՞ն ցանկալի կլիներ, որ մեր հոգեւոր հայրերն իրենց նախանձախնդրությամբ ոչ միայն պահպանեին մեր սուրբ կարգերն ու ավանդությունները, այլեւ պատկառանք ներշնչեին Հայոց բանավոր հոտի նյութեղեն փարախի հանդեպ. **«Ուստի (ո՜վ քահանաներ) աղաչում եմ, որ ըստ ձեր անվան կոչումի նաեւ կատարեք ձեր գործը եւ, որպես ձեր ժողովրդի հայրեր ու ծնողներ, ամեն ժամ հոգեւոր խրատներ տաք նրանց եկեղեցում, հրապարակներում եւ տանը՝ յուրաքանչյուրին ըստ տարիքի զգուշացնելով եւ հորդորելով՝ միշտ սովորեցնել աստվածային»** (Ս. Ներսես Շնորհալի).

ամեն:

Արքուր դպիր Կարապետյան

ՆԵՐՍԵՍ ԱՐՔ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՍՈՒՐԲ ՊՈՂՈՍԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՔԻՆ ԵՎ ԴՐԱ ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՍԲ. ՀԱԿՈԲՈՍԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՂԹԻ ՀԵՏ

Փարիսեցի հրեան, ինչպես դեռ դարձի չեկած Պողոսը, հավատում էր, որ Օրենքը տեսանելի ճշմարտություն է: Հռոմ., է, 12-ում Պողոսը գրում է, որ «Օրենքը սուրբ է», եւ որպես քրիստոնյա՝ երբեք սա կասկածի տակ չառավ: Սակայն Հռոմ., Բ, 17-29-ում նա մտորում է, թե ինչու հրեան չի կարողանում իրագործել իր քարոզածը՝ միմյանց հակադրելով «Օրենքի կիրառումն» ու «Օրենքի պահանջած առաձին կետերի կատարումը»: Օրենքի նպատակն է ցույց տալ մարդու եւ Աստծու միջեւ ճշմարիտ հարաբերությունը: Այս փոխկապը ոչ թե օրինապահ հնազանդություն է, այլ հիմնվում է հավատի վրա, որը «հաստատում է Օրենքը» (Հռոմ., Գ, 31): Սբ. Պողոսը հավաստում է, որ թլփատված հրեան, եթե Աստծու հետ ոչ ճիշտ հարաբերության մեջ է, կարող է նաեւ չթլփատված համարվել: Սա ճշմարիտ է հակառակ կողմից դիտելու դեպքում եւս. «Եթե անթլփատ մարդն Օրենքի իրավունքները պահի, նրա անթլփատությունն արդոք թլփատություն չի՞ համարվի» (Հռոմ., Բ, 26):

Փարիսեցու համար «Օրենքի իրավունքները» թելադրում են Օրենքի պահանջների մանրակրկիտ կատարումն: Քրիստոնյա Պողոսի համար արտաքին թլփատությունն էական չէ, եթե մարդը, նույնիսկ հեթանոսը, ունի հավատ. սա է միայն փաստում Աստծու հետ ճշմարիտ հարաբերությունը: Սբ. Պողոսը, անկասկած, խիստ օրինապահ ռաբբի էր, սակայն որպես քրիստոնյա՝ նա հավատում էր, որ Հիսուսը հարություն առած Տերն էր: Սակայն Հիսուսը խաչվել էր եւ այսպիսով՝ անիծվել, քանզի «կախվեց ծառից» (Գաղատ., Գ, 13): Եվ Օրենքն էր ասում, թե Հիսուսն անիծված է: Հենց այս փաստը դրդեց Պողոսին վերստին մտածելու Օրենքի մասին: Հին Կտակարանի կրոնը, ի վերջո, կատարյալ չէր եւ պահանջում էր սոսկ կույր հնազանդություն:

Պողոսը վերասահմանում է «հրեա» եւ «թլփատություն» բառերի ավանդական իմաստները: Ճշմարիտ հրեան նա է, ով իր հավատով ունի ներքին պատշաճ հարաբերություն Աստծու հետ: Իսկ ճշմարիտ թլփատությունն աշխարհայացք է եւ ոչ թե մարմնի վիճակ: Իրապես միայն Աստծուն է հայտնի՝ ով է հրեա եւ ով՝ թլփատված. նրանք, ովքեր ճշմարիտ հավատով են հարաբերվում Աստծու հետ: Հռոմ., Ա, 16-ում Պողոսը հպարտորեն նշում է, որ ինքը չի ամաչում

Ավետարանի համար. «Այն Աստծու զորությունն է՝ ի փրկություն բոլոր հավատացյալների, որովհետեւ Աստծու արդարությունը, որ հավատից է, հավատի համար է հայտնվում»:

«Արդարությունը» հունարենում հիմնականում իրավաբանական եզր է, որ նշանակում է «դատական ատյանի անկողմնակալ վճռի հրապարակում»: Իրավագիտության մեջ սա «արդարացում» է նշանակում, իսկ բարոյագիտության եւ կրոնական ենթատեքստերում «լինել Աստծու բարեհաճության մեջ»: Բարեպաշտ հրեան մտածում էր, որ ինքը կարող է արդար լինել Աստծու առաջ՝ պարզապես Օրենքը պահելով, սակայն վկայակոչելով Սաղմոս, ԺԳ, 3-ը՝ սբ. Պողոսն ասում է, որ ոչ ոք արդար չէ: Նա փաստում է, որ այն ամենը, ինչ Օրենքը կարող է անել, դա մարդկանց իրենց անձերը ճանաչել տալն է (Հռոմ., Գ, 20), քանզի օրենքի միջոցով է մեղքի ճանաչումը: Սա էր Աստծու՝ Օրենքը տալու նպատակը: «Բայց հիմա մենք ունեցանք Օրենքից անկախ արդարություն,- ասում է սբ. Պողոսը,- որն ի հայտ է գալիս Հիսուս Քրիստոսին հավատալու միջոցով» (Հռոմ., Գ, 21-22) եւ այնուհետեւ վկայված Օրենքով եւ մարգարեներով: Մարդու ճշմարիտ հարաբերությունն Աստծու հետ հաստատված է ոչ թե նրա սեփական ջանքերով, այլ Հիսուսի որպես Աստծու հետ մարդու հաշտեցման միջոցի հանդեպ ունեցած հավատով:

Ըստ սբ. Պողոսի՝ հավատքը Քրիստոսի Ավետարանի ընդունումն է: Եվ սա, իհարկե, նշանակում է հենց Քրիստոսին ընդունելը: Ըստ Նոր Կտակարանի հավատի գաղափարը սերտորեն կապված է մկրտության գաղափարի հետ: Մկրտությունը Քրիստոսի մահվամբ եւ հարությամբ էր Նրա կողմից տրված արդարացման ձրի պարգեւի ընդունմամբ ու ճանաչմամբ: Այդպիսի պարգեւը, ի տարբերություն հին Օրենքի թվացյալ արդարության, չի կարող «գնվել» գործերով:

Պողոսն իր այս միտքը շեշտում է Աբրահամի օրինակով: Հրեայի համար Աբրահամը կատարյալ հավատացյալ էր: Սակայն ինչպես ուրիշների, այնպես էլ նրա հավատը համարվում էր գովելի հնազանդություն Օրենքին (Ծննդ., Ժե, 6): Իսկ Պողոսը խոսում է ոչ թե Աբրահամի բարի գործերի մասին որպես հնազանդություն Աստծուն, այլ Աստծու նրա համար արածի՝ Աստծու շնորհի:

Շարունակությունը՝ էջ 5

ՄԵՐ ԱՅՍՕՐՎԱ ԿՅԱՆՔԸ ՊԵՏՔ ՈՒՆԻ ԱՆՀՈ՞Ւ ՀԱՎԱՏՔԻ

«Նորոգեցարուր նորոգութեամբ կենացս այսօր յարութեամբն Քրիստոսի նոր ժողովուրդ...»:
(ՇԱՐԱԿՆՈՑ)

Հայաստանյայց Ս. Եկեղեցու «Տօնացոյցի» համաձայն՝ Ս. Զատկին հաջորդող երրորդ կիրակին (այս տարի՝ մայիսի 14-ը) կոչվել է Կարմիր կիրակի: ԿԱՐՄԻՐ անունով մեր սուրբ հայրերը կամեցել են եւս մեկ անգամ շեշտել մեր փրկությունը, որն իրականացավ Աստծո Միածին Որդու արյան հեղմամբ եւ հրաշափառ հարությամբ, իմա՝ Աստծո մարդեղությամբ կատարված ողջ տնօրենություններով: Քանի որ կարմիրը պատկանում է լույսե ու վառ գունախմբին, ուստի եւ սույն կիրակին իր մասնավոր խորհրդով արտահայտում է մեր անհուն ուրախությունն ու ցնծությունը, միեւնույն ժամանակ՝ մեր ներքին հուզումն ու մտահոգությունը:

Կար ժամանակ, երբ Սուրբ Եկեղեցու լույս խորանից հնչում էին ինքնագովասանքի եւ շոյիչ խոսքեր: Կար ժամանակ, երբ հոգեւոր հայրերն ամեն անգամ քարոզ խոսելիս շեշտում էին մեր ազգային առանձնահատկությունները, մեր Մայր Եկեղեցու կատարյալ եւ ուղղափառ դավանությունը, եկեղեցական անաղարտ խորհուրդներն ու ավանդությունները: Կար ժամանակ, երբ սեփական փառքով ապրելն անհրաժեշտ էր ու օգտակար...

Թեպետեւ այսօր էլ մեր սուրբ խորաններից հնչում են ազգային հպարտությունը սնող քարոզներ ու ճառեր, սակայն մեր ներկա իրականության Ս. Եկեղեցիՙ հավատացյալների միությունը՝ մկրտված հայորդյաց բազմությունը, նման խոսքերից, առավել քան երբեւէ, վնասվում ու այլասերվում է. մատնվում անհոգության, ծուլության եւ ապա՝ անտարբերության:

Ուստի եւ այսօր, առավել քան որեւէ ժամանակ, կարեւորվում է սթափեցնող ու զգաստացնող կոչնակի սարսռացնող ձայնը, այսօր մեզ հույժ անհրաժեշտ է մի ԱՆԼՌԵԼԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ, որն իր դողդողանքներով զօրագիշեր ազդարարի համայն հայությանը՝ բովանդակ Եկեղեցուն Հայաստանյայց, որ վերջինս սթափվի «այս կյանքի մահահրավեր թմրությունից» եւ միջոցներ ձեռնարկի հավիտենական կործանումից խուսափելու համար. **«Մի՛ հպարտացիր, այլ վախեցիր, որովհետեւ եթե Աստված բուն ճյուղերին չխնայեց, գուցե երբեք քեզ էլ չխնայի»** (Հռոմ., ԺԱ, 20-21):

Մեր արդի կյանքն այնքան է մեքենայացվել, եւ մեր ժամանակներն այնքան են հաճոյապաշտ դարձել, որ հոգու կպտարյալ առողջության տեր անձնավորությունը եւս հեշտությամբ կարող է վերածվել հոգեկան արատ ունեցող խղճալի մի արարածի: Համատարած կեղծիքի, ձեւականության եւ սարսափեցնող խաղաղության մեջ ակամայից զգնաթափվում եւ տրվում ես հակառակ հոսանքին, ինչն էլ անասելի արագությամբ քշում-տանում է մի այնպիսի ուղով, որի սկիզբն ինքնին հուշում է, որ վախճանը լինելու է խավար, որտեղից բացակայում է լույսի մեկ նշույլն իսկ, որ վերջը «պարգեւելու» է լաց ու առանձնի կրճտում...

Օ՜հ, որքան դժվար է այս քաոսից դուրս ելելը, որքա՜ն խորդուրորդ է դեպի լույսը ուխտի տանող մեր ճանապարհը: Ինչո՞ւ են կյանքում եւ իրենց առաքելության մեջ ձախողվածները պատճեշներ ստեղծում նրանց համար, ովքեր համոզված են իրենց ազնիվ մտածումների հաղթանակին, ինչո՞ւ են իրենց հոռետեսությամբ ցամաքեցնում ու չորացնում այն բարեբեր հոգիները, որոնցում սերմանվել են առաքինության սերմերը: Ո՞վ Տեր Աստված, մեր հայրերի սիրասո՛ւն Աստված, փրկի՜ր մեզ չարից ու նրա նյութած չարություններից: Եղիցի լո՜ւս...

Հիրավի, հոգիդ խայտում ու բերկրում է, երբ ականջալուր է լինում բարձրյալ Աստծո շուրթերից արտաբերված լուսաձին հրամանին, որովհետեւ այլեւս չեա կասկածում, որ «ԹՈՂ ԼԻՆԻ ԼՈՒՅՍԻՆ» պիտի հաջորդի «ԵՎ ԼՈՒՅՍ ԵՂԱՎԸ»: Այո՛, թեեւ մեր ներկա կյանքը լի է մեղքի աղտեղություններով, սակայն մեր Տիրոջ պարգեւած Մխիթարիչի՝ Սուրբ Հոգի Աստծո մեջ քարոզվող գալիք, անդրաշխարհային երանությունները, շատ բնական է, որ դժվարությամբ ընդունվեն կամ էլ բնավ չընդունվեն: Բայց սա դեռ պատճառ չէ, որ նա, ով լեցուն է Սուրբ Հոգու յորանարիչյան շնորհներով, եթե նույնիսկ, թեկուզ եւ հաճախ, թաթախվի այս աշխարհի աղտեղությունների մեջ (իսկ այն ո՞վ է, որ եթե նույնիսկ զգեստի քղանցքները վեր բարձրացնի եւ ցեխի ու ցեխաջրերի միջով անցնի՝ չապակաված), լռի, ընկրկի, պարտվի: Նա, ով թեկուզ իր հոգու մի մասնիկով իսկ ըմբոշխնել է Արարչի քաղցրությունը, չի կարող հոգեւին հիվանդանալ ու մահանալ, նա անպատճառ պիտի ավետարանի եւ ճշմարտությունը պիտի բարոզի. **«Ով կարող է խոսել ճշմարտությունը եւ չի խոսում, պիտի դատվի Աստծուց»** (Հուստինոս Վկա): Իսկ եթե այդ «ընտիր անորն» էլ դա չանի, ապա քարերը պիտի աղաղակեն եւ իրենց Արարչից իրենց իսկ վրա տեր ու իշխան կարգված մարդ արարածի պատիժը պահանջեն: Իսկ մեր խոնարհված տաճարները եւ լքված ու անապատացած վանքերն էլ հանապազ իրենց սրտակեղեք հառաչանքներով նրան իր ուրացումը պիտի հիշեցնեն եւ խոցոտեն:

Ուստի եւ Հայոց Եկեղեցու սպասավորները, որքան էլ կամաակամա մեղանչեն, սակայն չե՛ն կարող լռել, չե՛ն կարող չխրատել, չե՛ն կարող չհանդիմանել, եթե նույնիսկ, որպես մահկանացու մարդ արարած, հանուն մարդահաճության պապանձվեն, ապա որպես Աստծո սուրբ օծյալներ, կամենան թե ոչ, պիտի ճառագայթեն եւ լուսավորեն. այն սուրբ օծումն ու աստվածային իշխանությունը, որ ստացել են որպես ընտրյալներ՝ կընդվզեն ու կբռնադատեն ո՛չ միայն երկրում, այլեւ Ահեղ Ատյանի օրը, քանի որ բահանայական երփներանգ շնորհներով զարդարյալ անձը հատու սուր է, որն ի վերուստ կոչված է կտրելու եւ կրակը նետելու չարության ամե՛ն մի խմոր, չորացած ամե՛ն մի ճյուղ, անպտուղ ամե՛ն մի ծառ...

Հետեւաբար՝ այսօր ինքնագովերգման ժամը չէ, այսօր միայն անցյալի փառքով ու հուշերով ապրելու ժամանակը չէ: Մեր այսօրվա կյանքը պետք ունի հոգու նորոգության, մեր այսօրվա կյանքը պետք ունի ոչ թե մարդահաճության, այլ բարձրյալ Աստծուն անմնացորդ ու անսակարկ ընծայվելու, մեր ներկա կյանքը պետք ունի անհո՛ւն հավատքի, զի աստվածային այդ շնորհը, առավել քան երբեւէ, նվազել է մեր հոգիներում. «Ավելացրու մեր մեջ, Տե՛ր ամենակալ, հավատը, հույսը, սերը եւ առաքինության բոլոր գործերը»:

Արդ, մենք՝ թե՛ աշխարհական եւ թե՛ հոգեւորական դասերս մեր Մայր Եկեղեցու, բոլորս անխտիր, պետք է կրկին ու կրկին վերածնվենք, սակայն այս անգամ ոչ թե նորից ընկղմվելով մկրտության սուրբ ավազանում, այլ ապաշխարության քավչարար ավազանում հանապազ լվացվելով՝ հոգին ու մարմինը եղծող մեղքերից մաքրազարդելու. չէ՞ որ թե՛ Հին Ուխտի մարգարեների եւ թե՛ Նոր Ուխտի առաքյալների միջոցով Ամենասուրբ Երրորդությունն Իրեն փառաբանողներին պատվիրում է. **«Լվացվե՛ք, մաքրվե՛ք, Իմ աչքի առաջ ձեր չար արարքները թոթափե՛ք ձեզնից, վե՛րջ տվեք ձեր չարագործություններին: Սովորեք բարի՛ գործել, արդարությո՛ւն փնտրեք...»** (Ես., Ա, 16-17):

Ահավասիկ Կարմիր կիրակիի՝ քրիստոնեական արիության ու բաջության հիշեցման տերունի օրվա թելադրանքը մեզ՝ Ջինվորյալ Եկեղեցու անդամներիս. չէ՞ որ քրիստոնյայի կյանքը մկրտության սուրբ ավազանից ի վեր պայքարի, մաքառման մի ընթացք է, «արութեան» գործերի պտուղներով ճոխանալու միջոց է, աստվածապարգեւ մեկ շնորհի բազմապատկման անկրկնելի ժամանակաշրջան է:

Արքուր դպիր Կարապետյան

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՎԼԱԴԻՄԻՐ ՍՈԼՈՎՅՈՎ

«Ամբողջ աշխարհը չարի մեջ է»:
Ա Հովհ., Ե, 19

Քրիստոնեությունը համայն աշխարհի փրկության ավետիսը եղավ, քանզի աշխարհն ամբողջ չարի մեջ է: Այդ չարիքից փրկվելու ճանապարհը բացեց Քրիստոսն Իր սխրանքով ու ուսմունքով: Մարդկությունը ոտք դրեց այդ ճանապարհին, սակայն քչերը գնացին այդ ուղիով, եւ մինչ այսօր էլ համաշխարհային փրկությունը մնում է լոկ որպես ավետիս: Այժմ էլ դեռեւս աշխարհը չարի մեջ է: Քրիստոնեության կենսական իմաստը մարդկության առաջնորդները փոխակերպեցին վերացական ուսմունքի, հետո այն համարյա անհետացավ առաջադեմ մարդկանց գիտակցությունից եւ բաքնվեց միայն ժողովրդի հոգու մութ անկյուններում: Քրիստոնեության իմաստը չի կարող պարզ լինել նրանց համար, ովքեր իրենց լավ են զգում այս աշխարհում: Նման մարդկանց համար Քրիստոսի քարոզները համր խոսքեր են, քանզի նրանք չեն տեսել այն չարը, որից Քրիստոսն եկավ աշխարհը փրկելու: Իսկ չեն տեսել Նրան եւ չեն էլ կարող տեսնել, որովհետեւ իրենք հենց այս աշխարհից են եւ համակված են աշխարհային չարությամբ: Իսկ նրանք, ովքեր զգում են այդ չարի ծանրությունը եւ փնտրում փրկություն, դրանով իսկ ապացուցում են, որ իրենք այս աշխարհից չեն, այլ Աստծուց:

Իրապես, աշխարհն ամբողջ չարի մեջ է: Չարը համաշխարհային փաստ է, քանի որ յուրաքանչյուր կյանք բնության մեջ սկիզբ է առնում պայքարից ու չարությունից, շարունակվում տառապանքներում ու ճորտության մեջ, ավարտվում մահով ու ապականությամբ: Համընդհանուր փաստը համարում ենք օրենք: Բնության առաջին օրենքը գոյության պայքարն է: Բնության ողջ կյանքն ընթանում է արարածների եւ ուժերի անընդմեջ թշնամանքում, նրանց՝ ուրիշինը չարությամբ հափշտակելու մեջ: Յուրաքանչյուր արարած մեր աշխարհում, փոքրիկ մժեղից մինչեւ մարդ, բնական իր ողջ կյանքի ընթացքում ասում է մի բան. «Ես կամ, եւ ողջ մնացյալը միայն ինձ համար է»: Բախվելով մեկ ուրիշի՝ նրան ասում է. «Եթե ես գոյություն ունեմ, ուրեմն քեզ այլեւս չի կարելի լինել. դու ինձ հետ տեղ չունես»: Եվ ամեն ոք դա ասում է, հարձակվում մյուսների վրա, ցանկանում ոչնչացնել բոլորին, եւ ինքն էլ ոչնչացվում բոլորից:

Քանի որ բնության կյանքը հիմնված է եսասիրության վրա, ուստի չար է, եւ նրա օրենքն էլ մեղքի օրենքն է: Եվ այս իսկ օրենքի համաձայն՝ մեղքն իր ետեւից բերում է վրիժառություն, այսինքն՝ չարը չար է ծնում: Ուստի, եթե յուրաքանչյուր գոյություն թշնամաբար է վերաբերվում մյուսներին եւ իր ետեւից վերացնում նրանց, ապա մյուսները եւս թշնամությամբ են փոխհատուցում եւ նույնպես նրան դուրս մղում կյանքից: Եվ մարդը, բնականաբար, պետք է իր վրա զգա այդ թշնամական ազդեցությունը: Նման փոխհարաբերությունը կոչվում է տառապանք՝ համաշխարհային չարի երկրորդ տեսակը: Ինչպես բնության մեջ ամեն արարած մեղք է գործում մյուսի հանդեպ, այդպես էլ անխուսափելիորեն մեկը մյուսի պատճառով տառապում է: Ամեն արարած, իր եսասիրության չափով, որով առանձնանում է բոլոր մյուսներից, իրեն օտար միջավայրում է գտնվում, որն ամեն կողմից նեղում ու ճնշում է իրեն, թշնամաբար ներխուժում իր կյանքը եւ պատճառում բազում տառապանքներ:

Բնական արարածի ողջ կյանքն անցնում է օտար ու թշնամական միջավայրի հետ պայքարի եւ իրեն պաշտպանելու մեջ: Սակայն օտար ուժերի ճնշման տակ նա չի կարող պաշտպանել իրեն, ինքը մենակ է, իսկ ախոյանները՝ շատ, ուստի նրանք պիտի հաղթեն: Ամեն մեկի եւ բոլորի միջեւ եղած հակամարտությունն անխուսափելիորեն հանգեցնում է յուրաքանչյուրի կործանմանը: Թշնամական միջավայրը վերջնականապես քայքայում է նրան եւ դուրս մղում կյանքից: Պայքարն ավարտվում է մահով ու ապականությամբ:

Եվ դա արդար է: Արարածն ինքն է ընտրել իր եսասիրությունը, ինքն է անջատել իրեն մյուսներից: Նա չի կարողանում ապրել մյուսների հետ եւ իրեն դրել է չար երկընտրանքի առաջ. կա՛մ ես, կա՛մ մյուսները: Իրեն հակադրելով մյուսներին՝ նա իր վրա է հրավիրում մյուսների ուժը, որն էլ ի վերջո կործանում է նրան: Արարածի ողջ կյանքը, պաշարված օտար ուժերով, քայքայման դանդաղ ընթացք է: Մահը միայն հայտնաբերում է կյանքի գաղտնիքը, ցույց տալիս, որ բնության կյանքը թաքնված ապականություն է:

Ահա գոյության այն հրե անիվը, որի մասին ասում է առաքյալը: Այսպիսին է համաշխարհային չարը՝ մեկ էությամբ եւ եռատեսակ: Այսպիսին է կենաց ծառը անկում ապրած բնության մեջ. արմատը մեղքն է, հասակը՝ հիվանդությունը, պտուղը՝ մահը:

Թարգմ.
Ա. Ավետիսյանը

ԱՍՐԳԻՍ ԾԱՌԻՐՀԱՔԻ. Փոքր ուրվագծեր Մասին

Հարված Հովհաննեսի Ա թղթի մեկնությունից

*Երբ փորձությունների մեջ ենք ընկնում, առաքյալներից առաջ Քրիստոսին հիշենք, Նրա ճանապարհը դիտենք, որով պարտավոր ենք ընթանալ, ինչպես Որոտման որդին՝ Հովհաննեսն է մեզ ասում բոլոր ամպերի որոտներից էլ ավելի ահավոր ու երկյուղալի: Ինչո՞ւ. որովհետեւ Քրիստոսի երկրային ամբողջ կյանքը նախատիպքով էր լի. Նրան միշտ մոլեկան, մոլորեցնող ու հմայող էին կոչում: Հրեաները երբեմն ասում էին. **«Այդ մարդն Աստծուց չէ, այլ մոլորեցնող է»** (հմմտ. Հովհ. Թ 16), կամ **«Այն մոլորեցնողը, մինչ կենդանի էր, ասում էր, թե երեք օրից հետո հարություն է առնելու»** (Մատթ. Իէ 63), կամ ցանկանալով նրան կախարդություն վերագրել՝ ասում էին. **«Դեւերի իշխանությամբ է դա հանում դեւերին»** (Մատթ. Թ 34), այլեւ Նրան սամարացի, դիվահար ու մոլեգին էին կոչում եւ այդպես կոչում էին այդ Բարերարին ու Երախտավորին: Եվ դարձյալ՝ արհամարհում ու ծաղրում էին Նրա տոհմը, ինչը խիստ կսկծեցնում է մեր միտքը: Ասում էին՝ **«Սա հյուսնի որդին չէ՞, որի հորն ու մորը մենք գիտենք»** (Մատթ. ԺԳ 55): Նաեւ՝ Նրա քաղաքի կամ գավառի համար էին ծաղրում, թե **«Գալիլիայից մարգարե չի ծնվում»** (Հովհ. է 52): Այդքան հեգնվում էր, բայց բոլորին էլ համբերում էր: Եվ դարձյալ՝ **«Գիրքը չի՞ ասում, թե Քրիստոսը Բեթղեհեմ գյուղից է գալու, իսկ սա, քանի որ Նազարեթից է, նա չէ»** (Հովհ. է 4):*

*Ուզո՞ւմ ես խաչի մոտ Նրան ուղղված հեգնություններն էլ իմանալ: Գալով խաչի մոտ՝ իրենց գլուխները շարժում ու ասում էին. **«Ուրիշներին փրկեց, ինքն իրեն չի կարողանում փրկել: Վա՜հ, որ տաճարը քանդում ու երեք օրում շինում էիր, իջի՛ր այդ խաչից, որ տեսնենք ու հավատանք քեզ»** (Մարկ. ԺԵ 29-32): Եվ Նրան քացախ էին մատուցում ու ծաղրում էին. քամիդ էին հագցնում, ծաղրելով առջեւը ծնկի իջնում, երեսին թքում: Եվ շարունակ այդպիսի փորձություններ էին Նրան պատահում:*

*Ուզո՞ւմ ես Նրա մասին եղած հայտնի ու գաղտնի չարախոսություններն իմանալ՝ ոչ միայն օտարներից եղած, այլեւ աշակերտներից, որոնց ասում էր. **«Մի՞թե դուք էլ եք ուզում գնալ»** (Հովհ. Զ 68), եւ անհավատներից էլ դիվահար էր կոչվում: Մի՞թե միշտ չէր փախչում մերթ Գալիլիա, մերթ Հրեաստան: Մի՞թե տակավին խանձարուրից փորձություններ չէին գալիս Նրա վրա. երբ փոքր մանուկ էր, մոր հետ եգիպտոս չփախա՞վ:*

*Տեսա՞ր այն ճանապարհը, որով Նա ընթացավ. արդ տես եւ աշակերտին Պողոսին, թե ինչպե՛ս անշեղորեն Նրա հետեւից գնաց: Լսենք նրան, որ ասում է, թե մեծ համբերությամբ դիմացավ նեղություններին, վշտերին, հալածանքներին, անձկություններին, ծեծերին ու բանտերին (տես Բ Կորնթ. Զ 4-5): Նաեւ ասում է. **«Մինչեւ այսօր էլ քաղցում ենք, ծարավում, մերկանում, ծեծվում ու թափառում, աշխատում ենք, գործում մեր իսկ ձեռքերով. հայհոյում են մեզ՝ օրհնում ենք, հալածում են՝ տոկում ենք, բամբասում են՝ աղաչում ենք»** (հմմտ. Ա Կորնթ. Դ 11 -13): Ո՞վ արդյոք առաքյալի այս վշտերի գոնե մի մասը կրնց. **«Մոլորվածների ու անարգվածների նման,-** ասում է,- **քառասունից մեկով պակաս ծեծ կերա հրեաներից, երեք անգամ ծաղկվեցի, մի անգամ քարկոծվեցի, գիշեր-ցերեկ ծովի անդունդներում տառապեցի, ճանապարհներին շատ անգամ նեղությունների ու վշտերի մեջ եղա»** (հմմտ. Բ Կորնթ. ԺԱ 24 - 26): Եվ քանի որ դա էր Աստծու կամքը, լսիր, թե ինչ է ասում իր մասին. **«Սրա համար երեք անգամ Տիրոջն աղաչեցի, որ ինձնից հեռացնի սատանայի պատգամավորին, բայց ասաց ինձ. «Իմ շնորհը քեզ բավական է, որովհետեւ իմ զորությունը տկարության մեջ է ամբողջանում»** (Բ Կորնթ. ԺԲ 8-9): Դրա համար ասում է. **«Հոժար եմ տկարությունների, նեղությունների, վշտերի, հալածանքների, անձկությունների համար. քանզի երբ տկար եմ, այնժամ զորավոր եմ»** (Բ Կորնթ. ԺԲ 10): Եվ դարձյալ՝ **«Ինձ՝ ուսուցչիս նմա՛ն եղիր, որովհետեւ սա է աշակերտի գործը»:***

Իսկ եթե Նա նեղության միջով անցավ, իսկ դու հանգիստ ճանապարհով ես ուզում գնալ, ընթանում ես ոչ թե Նրա ճանապարհով, այլ ուրիշ: Ինչպե՞ս հետը կգնաս, երբ Նրա հետեւից չես գնում, ինչպե՞ս աշակերտ կլինես, երբ չես հարում ուսուցչին: Ապա ուրեմն, սիրելիներ, նեղությունը մեծ բան է ու երկու մեծ բան է ուղղում՝ մեզքերն է ներում ու մարդուն հաստատուն դարձնում:

*Բայց ասում են. **«Ինչո՞ւ նեղություն կրենք, եթե այն կործանում ու ոչնչացնում է»:** Ոչ թե նեղությունն է դա անում, այլ մեր ծուլությունը: Իսկ ո՞րն է միջոցը. եթե արթուն լինենք, Աստծուն աղաչենք մեր կարողությունից վեր փորձության մեջ չգցել մեզ, եթե մեր հոգիների հանդեպ զգույշ լինենք, ապա հաստատուն կմնանք պատերազմի մեջ: Որովհետեւ եթե Քրիստոսին մեր թիկունքում ունենանք, ինչքան էլ փորձությունները բոլոր քամիներից ավելի սաստիկ փչեն, դրանք քամուց պոկված ծուղի ու տերեւի նման կհամարենք: Լսիր Պողոսին, որ ասում է. **«Այս բոլորին մենք հաղթում ենք»** (հմմտ. Հռոմ. Ը 37), եւ դարձյալ՝ **«Այս ժամանակի չարչարանքները ոչինչ չարժեն հանդերձյալ փառքի մոտ, որ հայտնվելու է մեզ»** (Հռոմ. Ը 18), այլեւ **«ժամանակավոր այս թեթեւ նեղությունները պատճառ են դառնում հավիտենական մեծ փառքի»** (հմմտ. Բ Կորնթ. Դ 17):*

> **Ասում է.**
> **«Նայեցե՛ք հավատքի զորագլխին ու կատարողին՝ Հիսուսին, որ ուրախության փոխարեն, որ Նրա առաջ կար, համբերեց խաչին, արհամարհեց ամոթը, նստեց Հոր Աթոռի աջ կողմում»**
> **(Եբր. ԺԲ 2):**

*Այս բոլորի մասին մտածենք, աղաչում եմ, այս ամենը հիշենք եւ այլեւս չենք վհատվի ու չենք գում է ասել. **«Եթե աշակերտ ես, Ինձ՝ ուսուցչիս նմա՛ն եղիր, որովհետեւ սա է աշակերտի գործը»:***

Իսկ եթե Նա նեղության միջով անցավ, իսկ դու հանգիստ ճանապարհով ես ուզում գնալ, ընթանում ես ոչ թե Նրա ճանապարհով, այլ ուրիշ: Ինչպե՞ս հետը կգնաս, երբ Նրա հետեւից չես գնում, ինչպե՞ս աշակերտ կլինես, երբ չես հարում ուսուցչին: Ապա ուրեմն, սիրելիներ, նեղությունը մեծ բան է ու երկու մեծ բան է ուղղում՝ մեզքերն է ներում ու մարդուն հաստատուն դարձնում:

*Բայց ասում են. **«Ինչո՞ւ նեղություն կրենք, եթե այն կործանում ու ոչնչացնում է»:** Ոչ թե նեղությունն է դա անում, այլ մեր ծուլությունը: Իսկ ո՞րն է միջոցը. եթե արթուն լինենք, Աստծուն աղաչենք մեր կարողությունից վեր փորձության մեջ չգցել մեզ, եթե մեր հոգիների հանդեպ զգույշ լինենք, ապա հաստատուն կմնանք պատերազմի մեջ: Որովհետեւ եթե Քրիստոսին մեր թիկունքում ունենանք, ինչքան էլ փորձությունները բոլոր քամիներից ավելի սաստիկ փչեն, դրանք քամուց պոկված ծուղի ու տերեւի նման կհամարենք: Լսիր Պողոսին, որ ասում է. **«Այս բոլորին մենք հաղթում ենք»** (հմմտ. Հռոմ. Ը 37), եւ դարձյալ՝ **«Այս ժամանակի չարչարանքները ոչինչ չարժեն հանդերձյալ փառքի մոտ, որ հայտնվելու է մեզ»** (Հռոմ. Ը 18), այլեւ **«ժամանակավոր այս թեթեւ նեղությունները պատճառ են դառնում հավիտենական մեծ փառքի»** (հմմտ. Բ Կորնթ. Դ 17):*

Այս բոլորի մասին մտածենք, աղաչում եմ, այս ամենը հիշենք եւ այլեւս չենք վհատվի ու չենք լքվի, թնկուզեւ գրկվենք, թալանվենք ու շատ վշտեր կրենք: Մեր քաջությունները երկնքում ու երկնքի առաքինությունների մեջ կլինեն, եւ ամեն բան մեզ հեշտությամբ կտրվի, եթե մեր բարեգործությունները այնտեղ ամբարենք եւ եթե այս կյանքի մասին հոգ չտանենք: Քանզի այս ամենը ինչ էլ որ լինի, ստվեր ու երազ է այն բաների մոտ, որոնց հույսն ունենք: Չկա ոչինչ՝ ոչ բնությամբ, ոչ էլ ժամանակով, որ հաստատուն լինի. եթե բարիք է, բարիք չէ, եւ եթե վիշտ, այնքան սարսափելի չէ: Եվ եթե ուզում ես, համեմատենք այս վշտերը հանդերձյալի վշտերի ու տանջանքների հետ. ի՞նչը կարող է հավասար լինել անշեջ կրակին, ի՞նչը կարող է համեմատվել անվախճան որդերի հետ, ի՞նչը կարող է հավասարվել ատամների կրճտոցին կամ ի՞նչը կարող է համեմատվել ժամանակների հետ: Եթե բյուր տարի ասես, ի՞նչ է անվախճան հավիտենության մոտ, մի՞թե այնպես չէ, ինչպես անչափելի ծովի համեմատ մի կաթիլ ջուրը: Իսկ կա՞ մի բան, որ համեմատվի գալիք բարիքների հետ. ոչ, այլ դրանք այնքան առավել են, որ աչքը չտեսավ, ականջն էլ չլսեց, մարդու սիրտն էլ չընկավ (հմմտ. Ա Կորնթ. Բ 9), եւ դա անչափ ու անպակաս հավիտենության մեջ է:

Ուրեմն մի՞թե սրա համար չարժեր բազում նեղություններ կրել, միշտ մեռնել եւ ամեն տեսակ չարչարանք կրել խոսքով ու գործով, իսկ եթե վիճակվեր նույնիսկ ողջ-ողջ այրվել, մի՞թե չարժեր խոստացված բարիքներին հասնելու համար այրվել մեր Տեր Հիսուս Քրիստոսով: Եվ Նրան եւ Նրա հետ Հորն ու Սուրբ Հոգուն, փառք, պատիվ եւ իշխանություն այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից:

Ամեն:

ՆԵՐՍԵՍ ԱՐՔ. ՊՈՂՈՍՊԱԼՅԱՆ

ՍՈՒՐԲ ՊՈՂՈՍԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՔԻՆ ԵՎ ԴՐԱ ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՍԲ. ՀԱԿՈԲՈՍԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՂԹԻ ՀԵՏ

Սկիզբը՝ էջ 3

Նա խափանում է Աստծու հետ տալիք-առնելիքի հրեական ողջ գաղափարը, ըստ որի Օրենքի բարի գործերը չեզոքացնում են չար արարքները: Քանի որ Աբրահամը համարվում էր արդար մարդ մինչեւ թլփատությունը, ուստի նրա արդարացումը կախված չէր դրանից:

Աստծու կողմից Հիսուսին մեռելներից հարություն տալը մեռածներին կյանք եւ գոյություն չունեցողին գոյություն տալու Աստծու խոստման երաշխիքն է (Հռոմ., Դ, 17): Շնչած առերեւույթ հակադրությանը՝ քրիստոնյաները, տարեց Աբրահամի եւ նրա անզավակ ծեր կնոջ նման, պետք է հավատ ունենան Աստծու կարողության հանդեպ եւ այն ամենի, ինչ նա խոստացել է: Եթե Աստծու խոստումները անհավանական են թվում, ապա պետք է հիշենք, որ գերագույն անհավանականն այն էր, որ Քրիստոսը պիտի մեռներ մեր մեղքերի համար. եւ ինչպես Պողոսն մեզ համար մեռավ, «քանի դեռ մենք մեղավոր էինք» (Հռոմ., Ե, 8): Այս անհավանական փաստն ընդունելով հնարավոր է հավատալ, որ Քրիստոսը կարող է մեզ փրկել «Աստծու բարկությունից»: Քրիստոնեական հավատը հավատ է Աստծու զորության հանդեպ հասնելու այն բանին, ինչին հասնելն այլ կերպ անհնար է: Աբրահամը «հույս» ուներ, քանի որ չուներ Աստծու բարության վկայությունը, որի վրա հիմնվեր նրա հավատարմությունը: Բայց մենք «հավատ» ունենք, որովհետեւ արդեն ականատես ենք եղել Աստծու արածին:

Օրենքը շնորհվեց ոչ թե Աբրահամին տրված խոստումը չեղյալ համարելու նպատակով, այլ Իսրայելի մեղքերի պատճառով: Խոստումը տրված էր ուղղակի Աստծուց, իսկ Օրենքը՝ միջնորդությամբ: Օրենքի նպատակն էր զսպվածության մեջ պահել Աստծու ժողովրդին մինչ այն ժամանակը, երբ Հիսուս Քրիստոսով հավատը հայտնվի (Գաղատ., Գ, 24): «Այժմ, երբ Հիսուսը եկել է, մենք այլեւս խնամակալի հովանու տակ չենք, այլ բոլորս էլ Աստծու որդիներն ենք հավատի միջոցով»,- ասում է Պողոսը: Օրենքը գործում էր որպես դաստիարակ Իսրայելին տանելու դեպի Քրիստոս (Գաղատ., Գ, 24): Մկրտության միջոցով մենք դառնում ենք մեկ ամբողջություն Քրիստոսի հետ եւ հետեւաբար ազատ:

Մենք տեսանք, որ հավատը Պողոսի համար նշանակում է եւ ճշմարիտ հարաբերություն Աստծու հետ, եւ ապավինում Նրա խոստումներին: Սա քրիստոնյայի համար իր կյանքի հիմքն է, իր բոլոր գործերի հիմնահենքը: Ըստ Պողոսի փրկությունն Աստծու ընտրն է մարդուն: Մարդը ոչ բարի գործեր կարող է ընդիրաբերել, ոչ էլ ողորմություն ապահովելու համար շնորհը: Բայց եթե նա ունի հավատի շնորհը, պետք է պահպանի եւ օգտագործի այն: Հավատ նշանակում է Քրիստոսին հավատալ որպես գործող անձի եւ ոչ թե սոսկ գոյության: Հավատը պետք է գործի սիրո միջոցով (Գաղատ., Ե, 6), որովհետեւ այն իր մեջ կրում է այլոց հանդեպ ծառայության պարտավորություն: Սակայն այս ծառայությունն օրինական պահանջ չէ ուրիշների համար, ինչպես նաեւ «իր անձն աշխարհից անարատ պահելը» (Հակոբ., Ա, 26-27):

Ըստ Հակոբոսի հավատը «նշանակում է համընդհանուր հավատ Աստծու հանդեպ», (եւ այնքան համընդհանուր, որ այն նույնիսկ դեւերն էլ ունեն (Հակոբ., Բ, 19) եւ Հիսուս Քրիստոսի դպրոց փառքի Տիրոջ (Հակոբ., Բ, 1): Քանի որ սբ. Հակոբոսը սբ. Պողոսից հետո է գրում, հավանորեն փորձում է, թեեւ ոչ ուղղակի կերպով, զերծ պահել մեզ այն հնարավոր վտանգից, որ Պողոսի հավատքով արդարացման շեշտադրումը կարող է հասկացվել որպես բարոյականության մեջ անհոգության արտոնություն: Օգոստինոսի եւ Կալվինի նման Պողոսը եւս կրել է ներքին տառապալի փորձություն, որ շատ տարբեր է քրիստոնյաների մեծ մասի կրածից: Սրանք որոշակիորեն տեսան իրենց կյանքում փոփոխություն կատարող Աստծու ծեռքը եւ դրանից եզրակացրին, որ ոչ ոք ոչինչ չի կարող անել նպաստելու համար իր փրկությանը: Սա, իհարկե, ճշմարիտ է, սակայն հեշտությամբ կարող է չափազանցվել այն նույն կերպ, ինչ կերպ հոգու մարմնի համեմատ կարեւորության շեշտադրումը հերետիկոսներին մղեց ծայրահեղ ճգնավորության եւ կամ սեռական անբարոյականության ասելով, թե մարմինը ոչ մի օգուտ չունի. եւ Աստված խնամք է տանում միայն հոգու մասին: Սբ. Հակոբոսը մեզ հիշեցնում է, որ կրոնը ներառում է եւ «հավատով» պատասխան Աստծու կանչին, եւ «գործերով» պատասխան մարդու կարիքներին: Եթե երկրորդը բացակայում է, ապա առաջինը չի կարող իրական լինել. «Նույնպես եւ հավատը, եթե նա գործեր չունի, առանձին մեռած է» (Հակոբ., Բ, 17):

ՀԱՅԵՐԸ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆՈՒՄ

1941 թ. հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիան ուխտադրժորեն հարձակվեց Խորհրդային Միության վրա, եւ Միության բոլոր հանրապետությունները միասնաբար ոտքի ելան պաշտպանելու սրբազան հայրենիքը: Այդ հանրապետությունների առաջին շարքում էր նաեւ Խորհրդային Հայաստանը, ավելի ճիշտ՝ ողջ հայ ժողովուրդը, որտեղ էլ այն կար՝ Հայաստանում թե Միության մյուս հանրապետություններում, նույնիսկ արտասահմանյան մոտ ու հեռու երկրներում:

Հայ ժողովուրդը չէր կարող այդ պատերազմը չհամարել իրենը: Նախ՝ որ ինքը մեծ ուժգոր Միության մի մասնիկն էր, եւ ֆաշիզմը նրա դեմ էր, ապա եւ Թուրքիան՝ հայության ամենանողկալի ու հավերժական թշնամին, աջակիցն էր ֆաշիզմի, իր ռազմական ուժերը կուտակել էր հարավային սահմանի երկարությամբ, սպասում էր հարմար պահի, որ ինքն էլ այստեղի՛ց խուժեր Միության տարածքը եւ, իհարկե, առաջին հերթին ոչնչացներ Հայոց երկիրն ու հայ ժողովրդին:

Ողջ Միությունն ապրում ու գործում էր մեկ նշանաբանով՝ «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար: Հայաստանը ռազմաճակատ էր ճամփել զենք բռնելու համար պիտանի իր բոլոր տղամարդկանց եւ հազարավոր կանանց ու աղջիկների: Ավելի քան 600 հազար հայ, եւ այդքանը՝ միայն փոքրաթիվ հայ ժողովրդից:

Ռազմաճակատի պես էր նաեւ հանրապետությունը, որ աշխատում էր, իսկապե՛ս, միայն հաղթանակի համար: Բավական է հիշել, որ այստեղ պատերազմի տարիներին գործում էին 30 նոր ձեռնարկություն եւ 110 արտադրամաս, որոնց թողարկած ամեն ինչը՝ ռազմապաշտպանական նշանակության:

Սփյուռքահայությունը եւս անմասն չմնաց ֆաշիզմի դեմ մղվող պատերազմին. հարյուրավոր հայազուն երիտասարդներ մարտնչում էին արտասահմանյան երկրների կազմակերպած դիմադրության ջոկատներում, պարտիզանական խմբերում: Իսկ ուրիշների նյութական զոհողությունների գնով ստեղծվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, որն ուղարկվեց Հովհաննես Բաղրամյանի ղեկավարած Մերձբալթյան առաջին ռազմաճակատին: Նրանք մի այդպիսի տանկային շարասյուն էլ ստեղծեցին հենց իր՝ Բաղրամյանի անվամբ:

Սակայն ինչ էլ որ լիներ, կռիվը ռազմաճակատում էր, եւ այնտեղ էր դարբնվում հաղթանակը: Այնտե՛ղ, ուր խորհրդային բանակների զորամասերի հետ հավասար խիզախությամբ ու անձնազոհությամբ կռվում էին բացառապես հայերից կազմված մի շարք դիվիզիաներ. 76-րդը՝ Ա. Մելիք-Շահնազարյանի, 89-րդը՝ Ս. Զաքյանի, ապա Ն. Սաֆարյանի, 261-րդը՝ Ն. Բալոյանի հրամանատարությամբ... Կային եւ տասնյակ հազարավոր ուրիշ զինվորներ ու սպաներ, որոնք այլեւայլ դիվիզիաներում ու զորագնդերում էին պանծացնում իրենց անունները:



Ս. Մուրադյան. «Որդիները չվերադարձան», 1968 թ.

Մոսկվայի համար մղված մարտերում հրաձգային դիվիզիաների հրամանատարներ էին գեներալներ Սարգիս Մարտիրոսյանը, Հայկ Մարտիրոսյանը, Ստեփան Գինոսյանը, որոնք թշնամուն հայրենիքից դուրս վռնդելուց հետո էլ հետեւեցին մինչեւ նրա որջը՝ մասնակցելով Լեհաստանի ու Չեխոսլովակիայի, Հունգարիայի ու բուն Գերմանիայի ազատագրությանը:

Պատերազմին մասնակցած 600 հազար հայերի կեսը չվերադարձավ ռազմադաշտից: Նրանց անունները զարդարում են մեր հերոս նահատակների ցուցակները: Շատերը հետմահու արժանացել են Խորհրդային Միության հերոսի կոչման եւ զանազան շքանշանների: Կարելի՞ է մոռանալ այնպիսի նահատակների, ինչպիսիք հայկական դիվիզիայի հրամանատար, գնդապետ Սիմոն Զաքյանն էր, Խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանը, որին Բալթիկայի արծիվ էին կոչում, եւ նրա սխրալից թռիչքների մասին ջերմագին երգեր էին հյուսել հյուսիսի ժողովուրդները, կամ Կապան աշխարհի հրաշք զավակ Հունան Ավետիսյանը, որ սեփական կրծքով փակեց հրակնատի երախը՝ յուրովսանն մոտեցնելով հաղթանակի այգը...

Հայ ժողովրդի մեկ հարյուրյակից ավելի զավակներ (նրանց շարքում 99-ը՝ Հայաստանի Հանրապետությունից, 20-ը՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզից) արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման (38-ը՝ հետմահու):

Շուրջ 70 հայ գեներալ գլխավորում էր խոշոր զորամիավորումներ, որոնց սխրագործություններով զարդարված է Հայրենական մեծ պատերազմի պատմությունը:

Իսկ չորս այն պանծալիները՝ որոնք պատերազմի առաջին օրվանից գլխավորում էին ամենապատասխանատու ճակատներ եւ հասան ռազմի բարձրագույն աստիճանի եւ փառքի:

Նավատորմի ծովակալ Հովհաննես Իսակովը Լենինգրադի պաշտպանության ղեկավարներից էր, փայլուն հեղինակությո՛ւն ռազմածովային բնագավառում: Պատերազմի ողջ ընթացքում նա իր տաղանդն ու խորիմացությունն էր ծառայեցնում մեծ հաղթանակի դարբնումի գործին:

Ավիացիայի մարշալ Արմենակ Խուդյակով-Խանփերյանցն իր բնագավառի աստվածն էր: 1941-45 թթ. Արեւմտյան ռազմաճակատի ռազմաօդային ուժերի շտաբի պետն էր, նույն ռազմաճակատի ռազմաօդային ուժերի հրամանատարը, ապա եւ խորհրդային բանակի ռազմաօդային ուժերի շտաբի պետ, իսկ Ճապոնիայի դեմ բացված ճակատում գլխավորում էր խորհրդային ռազմաօդային ուժերը:

Զարդախլվի պանծալի զավակ Համազասպ Բաբաջանյանը պատերազմն սկսել է գնդապետի աստիճանով, չնայած դրանից առաջ անցել էր զինվորի փառավոր ուղի, խորհրդա-ֆինական ճակատում աչքի ընկել որպես հմուտ ռազմավար:

Սեծ հայրենականի ճակատներում նրան էր վստահված մոտոմեքենայացված խոշորագույն միավորումների ղեկավարությունը, եւ նա միշտ էլ արդարացնում էր վստահությունը, կատարում հերոսական գործեր, որոնց համար էլ 1944-ին արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման... Իսկ հետո էլ դարձավ զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ:

Հովհաննես Բաղրամյանը Սարդարապատի հերոսամարտին է մասնակցել երիտասարդ հասակում: Հետագայում կոփվել է հայկական եւ խորհրդային զորամիավորումներում, ձեռք բերել բարձր գիտելիքներ Կարմիր բանակի բարձրագույն ուսումնական հաստատություններում, պատերազմը դիմավորել որպես հմուտ զորավար, որին կարելի էր վստահել ամենաբարդ տեղամասեր ու ճակատներ... Նա գլխավորել է ռազմական կորպուսներ ու բանակներ, 1943-ին նշանակվել Առաջին մերձբալթյան ռազմաճակատի զորքերի հրամանատար եւ, մասնակցելով Բելոռուսիայի ազատագրությանը, մտել է Մերձբալթիկա, դարձել նրա ազատարարը, շարունակելով հաղթական արշավը՝ գրավել Քյոնիկսբերգը: Լավ է, որ մեծ զորավարն ապրեց մինչեւ խոր ծերություն: Խորհրդային Միության կրկնակի հերոս էր ու մարշալ, ուրիշ-ուրիշ տիտղոսների ասպետ եւ ամենակարեւորը՝ իր ազգի երեւի թե ամենասիրելի զորահրամանատարը, պարզապես պաշտամունքի առարկան:

Այսպե՛ս, Խորհրդային Միության չորս մարշալները՝ ելած մի փոքր ազգի ծոցից:

Չի կարելի վերստին չհիշել պատմահոր արդար խոսքը. «Զի թէպէտ եւ եմք ածու փոքր եւ թուով յոյժ ընդ փոքր սահմանեալ..., սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս եւ արժանի գրոյ յիշատակի»:

Բագրատ Ուլուբաբյան
Պատմ. գիտ. դոկտոր

ԾՈՎ՝ ՊԱՐՓԱԿՎԱԾ ԱՆՈԹԻ ՄԵՋ

ՄԱՐՏԻՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«Ես այն հրեղեն թռչունին կնմանիմ, որ թեւերը թափահարելով՝ ամբողջ աշխարհը կիրդեհե... Ես այն ծովն եմ, որ պարփակված է անոթի մը մեջ... Տիեզերքի մեջ ինձ նման թիթեռ չկա, աշխարհի մեջ նման խելագար չկա»,- 11-րդ դարում ասել է պարսիկ բանաստեղծ Բաբա Թահր Ուրիանը: 1908-ին նրա քառյակներից այսպես թարգմանել է հայ գեղանկարիչ Փանոս Թերլեմեզյանը: Դրանք լույս տեսան «Գեղարվեստ» ամսագրի երեք համարներում, որ հայ մշակութային կյանքի հայելին էր:

Հրապուրիչ, գայթակղիչ էր 1900-ական թվականների հայ մշակույթի անդաստանը: Տերյանի «Մթնշաղի անուրջները», Իսահակյանի «Արու Լալա Մահուրին», Չրաքյանի «Ներաշխարհը», Սուրենյանցի «Սալոմեն», Թադեւոսյանի «Հանճարը եւ ամբոխը», Սարյանի «Հեքիաթներն ու երազները» հայոց հոգսն ու տխրությունը պարուրում էին խորհրդավոր, զմայլելի գույներով, եւ Թերլեմեզյանը տեսնում էր այդ ամենը զարգացած ու խելացի վանեցու հայացքով:

Փանոս Թերլեմեզյանը, սակայն, ամրապինդ ու երկրային մարդ էր, իրականությանը սթափ նայող մեկը, որպիսիք քիչ են պատահում հայ գեղանկարիչների մեջ: Ինքը նկարելիս «հրեղեն թռչունի նման» չէր, ինչպես ստեղծագործում էին հիշատակված հայ բանաստեղծներն ու արվեստագետները:

Նա հանգիստ ու զուսպ զննում էր շրջապատը եւ պատկերի մշակումը հասցնում էր մինչեւ այն կետը, որից հետո պիտի սկսվեր գեղարվեստը: Նրա իրականությունը զուրկ էր արվեստի կեղեւից: Այդպիսի խստաճաշակ վարպետությամբ են ստեղծված «Լոռեցի հովիվը», «Սանահինի վանքի գավիթը», նույնիսկ 10-ական թվականներին նկարած «Կոմիտաս» կտավն ու «Սիփան սարը Կտուց կղզուց» բնապատկերը:

Այս ստեղծագործություններն ունեն պատմական, ազգագրական անգնահատելի արժեք: Նաեւ՝ գեղարվեստական արժեք, որն այս դեպքում Թերլեմեզյանի հիմնական նպատակը չէր եւ ոչ էլ նրա ընդունակությունների, հնարավորությունների սահմանն էր խորհրդանշում:

Թերլեմեզյանի գեղանկարչական ձիրքն ակնառու էր դեռեւս 1900 թվականին Ֆրանսիայում ստեղծած «Աշխատավորուհին ջրհորի մոտ» եւ «Բնանկար. Բրետան» կտավներում:

Առաջինում պատկերված է Փարիզի բանվորական թաղամասի իրականությունը: Կյանքի տառապանքը երեւում է ոչ միայն բանվորուհու կծկված մարմնի, այլեւ քանդվող, մռայլադեմ շենքերի ճնշող հարաբերության մեջ: Իսկ «Բրետանը» վեհաշունչ բնանկար է, արվեստի իսկական մի գործ՝ ձոնված բնությանը, ծովին, տներին, մարդկանց: Թեեւ թախիծ կա այստեղ, այնուամենայնիվ գեղեցիկ ու ցանկալի է «մարդկանց երկիրը», որ պատկերել է Թերլեմեզյանը 19-րդ դարի եվրոպական ռեալիզմի գեղանկարչական եղանակով:

Առաջնակարգ վարպետի գործեր են հատկապես «Ժայռեր Լա-Մանշի ափերին» եւ «Բրետանի ափերը» բնանկարները, որ արվեստագետը նկարել է իր դեգերումներով հարուստ կյանքի այն շրջանում, երբ հեռվում էին մնացել ծանր ու մղձավանջային օրերը, եւ գալիքն ամբողջովին հույս էր՝ 1921-ին:

Այս պատկերները թափանցիկ են, շնչում են գույներով ու նրբերանգներով. բնության հատվածի մեջ նկատելի են ոչ միայն իրական գեղեցկությունը, այլեւ գեղանկարչի վերաբերմունքը, տրամադրությունները:

«Թեեւ նկարչությունն ու քանդակագործությունը նմանողական արվեստներ են, այդ չի նշանակում, որ նրանց նպատակն է արտաքին լավ նմանություն տալը. բնավ երբեք, այլ նրանց նպատակն է բնությունը բանաստեղծորեն բացատրելը»,- գրել է Թերլեմեզյանն իր հուշերում:

Ինչպես տեսանք, նրա ընտիր ստեղծագործությունները, իսկապես, «բնությունը բանաստեղծորեն» մեկնաբանում են:

Հայրենիքում, սակայն, նա բանաստեղծելու ո՛չ ժամանակ ուներ, ո՛չ տրամադրություն, թեեւ ինչպես վկայում է հիշատակված թարգմանությունը՝ նրա մեջ ապրում էր բանաստեղծությունը, եւ իր շատ հայրենակիցների նման «ծով էր՝ պարփակված անոթի մեջ»:

Նա պիտի ստեղծեր առավել շքեղ ու բանաստեղծական պատկերներ, եթե երիտասարդ հասակում արդեն ամբողջ էությամբ չմղվեր դեպի այն հորձանուտը, որ պատմաբանները անվանում են ազգային ազատագրական պայքար:

Հիրավի, Թերլեմեզյանն այդ տարերային կռվի պայծառ դեմքերից էր, Վանի ինքնապաշտպանության կարեւոր անձերից մեկը:

Իր քաղաքական հայացքների համար Թերլեմեզյանը 1889-ին հեռացվում է ուսուցչությունից եւ վեց ամիս ճաշակում հետամնաց սուլթանական ռեժիմի բանտը, ազատվում է փրկագնով, հեռանում դեպի Կովկաս, հասնում մինչեւ Պետերբուրգ, ուսանում է Գեղարվեստի ակադեմիայի նախապատրաստական դասարանում:

Թուրքական իշխանությունները նրան հետեւում են նաեւ այստեղ. ցարական ոստիկանության միջոցով նրան բանտարկում են Ռեւելի (Տալլինի) բանտում: Այստեղից տեղափոխում են Թիֆլիս՝ Մետեխի բանտ, ուր վեց ամիս մնալուց հետո աքսորվում է Իրան:

Կոփված ու տոկուն նկարիչը հասնում է Փարիզ, ուսանում Ժյուլիեեւի ակադեմիայում, ուր հիմնականում սովորում էին օտարերկրացի ուսանողներ:

Մի քանի տարի (1910-1914) Պոլսում Կոմիտասի հետ ապրում է նույն հարկի տակ, ուր հաճախ էին այցելում Վարուժանը, Սիամանթոն, Զոհրապը, Օտյանը եւ ուիշներ:

Թուրքիայում այդ տարիներին Թերլեմեզյանն ամենանշանավոր արվեստագետն էր, Փոքր Ասիո միակ գեղանկարիչը, որը Սյունյենենի ցուցահանդեսում արժանացել էր ոսկե մեդալի («Սանահինի վանքի գավիթը» նկարի համար):

Ամենածանր ժամանակ (1914-1915) նա մեկնում է հայրենի Վան: Ե՛վ նկարում էր, եւ՛ անվրեպ կրակում: Սակայն ինչ կարող էր անել փոքրաթիվ հայերի խումբը հետամնաց ու բութ պետական մեքենայի՝ նախապես ծրագրված եղեռնի դեմ: Եվ Թերլեմեզյանն իր զինակից ընկերների հետ ստիպված լքում է հայրենի դիրքերը: Թիֆլիս են հասնում նրանցից քչերը եւ միայն մի նկար՝ «Սիփան սարը Կտուց կղզուց»:

Մինչեւ Երեւանում հաստատվելը նա անցնում է զանազան քաղաքներով եւ երկրներով, հասնում մինչեւ Ամերիկա: Հիմա առանձնակի հաճույք է Հայաստանի ազգային պատկերասրահում դիտել նրա նկարները, ուշիուշով հետեւել նրա արվեստի ընթացքին: Եվ արդեն դժվար չէ պատկերացնել մի մարդու, որ արվեստի երանելի ազատության ափն էր գնում կրակների միջով:

ԾԱՂԻԿՆԵՐԸ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԵՆ, ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ՝ ԱՆՅԱՎՈՐ

Լույս տեսավ Հովիկ Հովեյանի բանաստեղծությունների հինգերորդ՝ «Թափառական ամառներ» գրքույկը, գուսան աշխարհ՝ իր զարմանալի տպավորություններով ու խայտանքով, արեւի երկրի դեռեւս չպեղված խոսք ու խորհրդով, տաք կարոտներով ու սպասումներով:

Հովեյանի համար բանաստեղծությունը զվարճալիք չէ եւ ոչ էլ պահի ակնթարթային ընթացք: Այն աշխատանք է, բանվորի, դարբնի, խեցեգործի աշխատանքից ոչ պակաս: Նրա բանաստեղծությունը խորքային նստվածքների արդյունք է: Իսկ այդ նստվածքները մեզ ժառանգված մշակույթի ակունքներում են, կուտակվել են շուրջ երկու հազար տարվա քրիստոնեական մեր վարքագծով: Հովեյանի համար քրիստոնեությունը խղճի ճանապարհ է, կրոնների բանաստեղծություն, մաքրագործման ուղի, որ ձերբազատվեց ավելորդ զարդարանքներից՝ կարեւորելով անհատի բարձրացման, աստվածային կատարելության ձգտման գաղափարը: Անբացատրելին, Անմեկնելին հզոր էներգիայի ժայիտներ է առաքում աշխարհ: Այդ ժայիտները հավաքողներից մեկն էլ Հովիկ Հովեյան բանաստեղծն է:

Լույսով լցվող նռնաթագ,
Լույսը սնող բյուրաստինք,
Եկեղեցի՛ հայրենյաց,
Զանգիդ լեզվակն եմ ծիծառ...

Չարձագանքել այսօրվա հոգսաշատ ու դժվարություններով լի կյանքին, չողոնջել՝ զանգի լեզվակը չի կարող: Սակայն այդ դողանջը միշտ բխում է բանաստեղծի լավատեսությունից, իրեն հոգեհարազատ դարձած սարյանական իմաստնությունից՝ «Ծաղիկները հավերժական են, պատերազմներն՝ անցավոր...»:

ԱՂՈԹԱԳԻՐՔ

Յորենի հասկ է ամեն մի դողը,
Բառերի դողը՝ աշխարհ պահող լույս,
Գիրքն է ինչ դեպի դոհմս դանողը,
Աղոթագիրքը՝ այր որդեկորույս:
Յորենի արտ է սեղանիս փռված,
Աղոթահասկեր՝ շրշուն, ոսկեծոր,
Իմ որդին՝ կաքավ արտում մոլորված,
Իմ որդին՝ շուտով շիկաքեղ հնչվոր:
Յորենի արտ է աշխարհը հիմա,
Յորենի արտ է եղել դեռ հնուց,
Աղոթահունդեր մեզ պիտի մնան
Եռամեծ Հորից, Որդուց ու Հոգուց...

ՎԱՆՔՆ ԻՄ ՏԱՏՆ Է ՇԱԼԸ ՄԵՋՔԻՆ

Վանքն իմ դատն է՝ շալը մեջքին,
Վանքը՝ մենակ երկնքի դակ,
Տրված զանգի աղոթք-երգին,
Տարտ՝ կորած պահարայի ձագ:
Վանքն իմ դատն է՝ շալը մեջքին,
Գնամ, ծնկեմ կամարի դակ:

ՀՈԳԻՆ ԱՆՅԱՎ ԻՄ ԿՈՂՔՈՎ

Հոգին անցավ իմ կողքով,
Ծողքը գցեց թիկունքիս,
Իր լուսաքառ խորհրդով
Անձայն իջա ես ծունկի:
Ծիլ դվեցի, շիվ դարձա,
Իմ ճյուղերին՝ զանգակներ,
Թե ժայռ էի՝ շունչ դարձա,
Թե ձայն էի՝ դարձա սեր:
Հոգին անցավ իմ կողքով,
Ծողք գցեց իմ թիկունքին,
Գուցե հոգու շողքերով
Գնամ, հասնեմ կապույտին:

ԵԿԵՂԵՑՈՒ ԴՈՒՌԸ ԲԱՑ Է

Լույսը դիպել է խուլ զանգին,
Զանգի հոգոցն ընկել է ցած,
Աղավնու նոր ծնված ձագին
Ափի մեջ է առել Աստված:

ԱՈՒՐԲ ԽԱՉԻ ԵՐԵՎՈՒՄԸ

(21 մայիսի)

351 թվին, երբ Երուսաղեմի երկնքում փայլատակում է Տիրոջ լուսարձակ խաչը, լույսի առկայծումն այնքան ուժգին է լինում (ասում են՝ արեգակից էլ առավել), որ քաղաքի ամբողջ բնակչությունը՝ կանայք, տղամարդիկ, ծերերն ու մանուկները՝ բոլորը, վազում են եկեղեցի՝ փառաբանելու այդ հրաշքը գործողին:

Այդ օրվանից դարեր են անցել, բայց մինչեւ օրս քրիստոնեական Եկեղեցին հիշում ու տոնակատարում է այդ սքանչելի դեպքը:



ԱՂՈԹՔ

Թող Քո խաչը ապավեն լինի մեզ, Տե՛ր Հիսուս, երբ լուսավոր ամպերի միջից երեւաս աստվածային փառքով:

Այնժամ մենք՝ Քեզ հուսացողներս, չամաչենք, այլ Քո մեծ զորությամբ բերկրենք Քո աջ կողմում՝ որպես Լույսի որդիներ եւ փրկվածներ:

ԱՊԱՎԻՆՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԻՆ

Խաչակնքվելով՝ խաչի կնիքը մեզ վրա դնելով, ներքուստ վերապրում ենք Հիսուս Քրիստոսի փրկագործությունն ու փառաբանում Նրա զորությունն ընդդեմ չարի, հոգով ամրանում ու զորանում Նրա պահպանիչ Աջի ներգործությամբ:

ՍՈՒՐԲ ԳՐՔԸ ՔՈ ՍԵՂԱՆԻՆ

Արարչագործությունն ավարտված էր: Աստված առաջին մարդկանց բնակեցրել էր եդեմական պարտեզում ու պատվիրել ստեղծարար աշխատանքով ծառայել եւ հնազանդ լինել Իրեն: Աստված պատվիրել էր ճաշակել դրախտի բոլոր վայելքները, բարիքները, բոլոր ծառերի պտուղներից, բացի չարի ու բարու գիտության ծառի պտղից:

Դրախտում Ադամն ու Եվան երջանիկ էին: Աստվածային պարտեզն ինքնին երջանկաբեր էր, երանավետ: Տիրոջ ներկայությունն այնտեղ այնքան անմիջական էր, որ աստվածակերտ նախամարդկանց ամեն օրն ու ակնթարթը հոգեւոր բերկրանք էր, ուրախություն՝ ամբողջապես: Ու նրանք ապրում էին անմեղ մանուկների նման, սակայն...

Դեռեւս արարչագործության առաջին օրը Տեր Աստված լույսի հետ ստեղծել էր հոգեւոր այն էակներին, որոնք բանական են, ինչպես հետո մարդը պիտի լիներ, բայց չունեն մարմին: Աստված ստեղծել էր հրեշտակներին՝ Իր պատգամաբերներին՝ մարդկանց սպասավորելու համար:

Բա՞ռնր ու լուսավոր էակներ...

Եղավ վեցերորդ օրը, ու ամենաստեղծ Տերն իրագործեց արարչագործության գերագույն նպատակը՝ կյանք տվեց մարդուն՝ որպես իշխան, որպես պսակ տիեզերքի: Իսկ հրեշտակները, բարձր ու լուսավոր էություններ լինելով, ցածր էին մարդուց: Սրանից էր, որ ընդոստության ոգի դարձավ առավոտյան ծագող Արուսյակը՝ այն լուսե ոգին, որ տենչում էր լինել ամենաբարձրը, բարձրացնել իր գահը երկնային աստղերից էլ վեր, նմանվել Բարձրյալին:

Ընդոստություն Տիրոջ հանդե՞պ...

Հպարտ ոգին պիտի խոնարհվեր:

... Ու Տեր Աստված վտարեց նրան երկնային բարձունքներից:

Արուսյակը գայթել էր, ու հաստատվեց երկրի վրա՝ սկիզբ դնելով տարակուսանքին, հակառակությանն ու...

Ու երկրի վրա կողք կողքի հայտնվեցին չարն ու բարին: Այդուհետ դրախտային երանությունը ճաշակող Ադամի ու Եվայի աստվածապարգեւ ազատ կամքն էր, որ պիտի ընտրություն կատարեր՝ մնալ երանական ուրախության մե՞ջ, թե՞...

Իսկ հակառակության ոգին չէր խաղաղվում: Ու մի օր էլ օձի էությանը ձուլված՝ դիմեց Եվային.

ՄԱՐԳՈՒ ԱՆԿՈՒՄԸ

-Ինչո՞ւ Աստված ասաց, թե դրախտում գտնվող բոլոր ծառերի պտուղներից չե՛ք կարող ուտել: ...Կարո՞ղ եք եւ չեք մահանա:

Ընդոստ ոգին կասկած ու անվստահություն հաղորդեց մարդուն՝ Տիրոջ հանդեպ, Տիրոջ խոսքի հանդեպ: Մարդը գայթակղվեց, կեղծիքն ընդունեց որպես ճշմարտություն, արգելված պտուղն առավել ախորժալի թվաց նրան ու ճաշակեց այն՝ ավելիին հասնելու ձգտմամբ:

...Ու խախտվեց արարչական ներդաշնակությունը:

Մարդն անհնազանդ գտնվեց իր ստեղծողի հանդեպ: Նա, ում հոգին տեր պիտի լիներ, ով մարմնապես էլ անմահ պիտի լիներ, դարձավ մեղքի ծառա: Նախամարդը չպահպանեց իր անմեղությունը, չսրբացավ:

Անհնազանդ մարդը պիտի պատժվեր: «Ո՞ւր ես»,- Տիրոջ կանչից Ադամը փորձեց խույս տալ՝ ամոթը խեղդում էր. փորձեց պաշտպանել ինքն իրեն, մեղքը բարդել ուրիշի վրա. պահը սարսռեցնող էր...

Բայց... խուսափել Աստծու առաջ պատասխան տայո՞ւց:

Անդրդվելի է Տիրոջ խոսքը: Ու անխուսափելի էր Նրա դատաստանը:

Այդուհետ մարդու աշխատանքը, որ օրհնություն էր ի սկզբանե, վերածվեց չարքաշ գործի՝ քրտինքով հաց վաստակելու: Կինը, որ հավասար էր իր ամուսնուն, այդուհետ դարձավ ենթակա նրան...

Անչափելի էր Տիրոջ վրդովմունքը. եւ Նա անհնազանդ հողեղեններին արտաքսեց բերկրության դրախտից, որպեսզի անարժանները հանկարծ չփորձեն մոտենալ կենաց ծառին ու ճաշակել նրա պտուղներից:

Մարդու համար դրախտն ու կենաց ծառն այլեւս երկնքում են:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Գրել է նա երգեր, տաղեր,
Պոեմներ ու շարականներ,
Ուներ նա ձայն շատ բերկրալի.
Սուրբ Ներսեսն էր .....:

(Մոսես Խորենացի)

Մի վիշապ կա յոթգլխանի,
Անկուշտ, ագահ հոգի ունի.
Երբ փորը-ինչ տկարանաս,
Կպարմանի շատ մեծ վնաս:

(Ավետիք Սահակյան)

Շողիկ Քոչարյան

ԿՌԱՀԻ՛Ր ԱՌԱԿԸ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆԻ՛Ր ՃԻՇՏ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԿՈՒՍԱԾՔԱՏ

Բարի լուր.

«Սիրո մոլորակի» բնակիչներից Լիլիթ Արսենյանը արժանացել է իրենց դպրոցի (Երեւանի թիվ 22 հանրակրթական դպ.) «Տարվա լավագույն աշակերտուհին» կոչմանը: Կեցցես, Լիլո: Ծնորհավորում ենք:

Տիրոպ սրբոյի Հավքունի սոբի

Լիլո (Լիլիթ Արսենյան, 14 տ.)

Էջի խմբագիր՝ Աննա ԱԼՈՅԱՆ

ՀՈԳՈՒ ԽՈՍՔ

Աստված սեր է, եւ իմ հավատն առ Աստված շատ մեծ է ու ամուր՝ այնպես, որ ես իմ ամեն գործում զգում եմ Աստծու ներկայությունը: Զգում եմ, որ Աստված նաեւ իմ մեջ է բնակվում: Երեւի այդ զգացումն էլ օգնում է, որ ջանամ անաղարտ պահել ու ճիշտ օգտագործել բոլոր այն շնորհները, որ ինձ տվել է Աստված:

Աստվածային սեր ասելով՝ ես հասկանում եմ, որ եթե մարդն ընդունակ է սիրելու ինչ-որ մեկին կամ ընդհանրապես մարդկանց, ուրեմն նա ընդունակ է սիրելու նաեւ Աստծուն: Իսկ սիրել մարդկանց նշանակում է հավատալ, վստահել, ներել, կիսել ունեցածը...

Երբ ինձ հետ ինչ-որ վատ բան է կատարվում, առաջին հերթին փորձում եմ գտնել ի՛մ մեղավորությունը եւ ոչ թե ուրիշի: Ես գիտեմ, որ եթե մարդը կարողանում է ճանաչել իր գործած մեղքը, զղջում է արածի համար, ապաշխարում, ապա Աստված ներում է, որովհետեւ Նա անսահման գթասիրտ է: Ու քանի որ ես աշխատում եմ նմանվել Աստծուն, հետեւաբար ես էլ ներում եմ իմ ընկերներին, երբ զգում եմ, որ պետք է ներել...

Անի (16 տ.)

Ռաֆայել (Ռաֆո) ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ՅՈԹ ԴԱՐ ՀԵՏՈ

Քարի վրա է ծնվել հայը, քարի վրա ապրել, քարով ապրել, քարը քարին դրել, քարերի վրա բարձրացել, քարեր բարձրացրել:

Քարերի մեջ է աճել մանուկը, քարով խաղ արել, քարն իմացել, քարի պես ամրացել:

Ու այսպես, հազարավոր տարիներ, հայն իր առաջին քայլից քարի հետ է ապրել, քարը մշակել, քարից ջուր քամել:

Հրաշքներ է գործել քարից, լեռների ընդերքում տաճարներ քանդակել, քարե գործվածքներ արել, կամուրջներ կապել, պալատներ բարձրացրել, քաղաքներ կերտել ու կերտել քաղաքների քաղաք Անին:

Հազար տարին բոլորեց այն օրերից, երբ Անին հռչակվեց հայերի մայրաքաղաք: Կերտվեց քաղաքն Ախուրյանի ապառաժ ափին այդ ապառաժից քարեր պոկելով, եւ բարձրացան աստվածակերպ եկեղեցիներ:

Ես պաշտում եմ Անին՝ հայ ժողովրդի հանճարի փայլատակող գագաթը, նրա քարակոփության բազմադարյան ուղին, նրա մեջ տեսնում իմ ժողովրդի քարե կամքը՝ կառուցել ու կառուցել, ինչքան էլ որ քանդվի:

Ի՞նչ թաքցնեմ. մտածում եմ՝ իսկ եթե Անին չավերվեր, չամայանար, եւ նրա բնակիչները չլքեին քաղաքը, եւ ապրեր Անին մյուս քաղաքների նման մինչեւ այսօր, կպահպանե՞ր իր տեսքը, կլինե՞ր Անի: Ես մտածում եմ այն մասին, թե ինչ տեսք կունենար Անին, եթե հասներ քսաներորդ դարին. ապրեր երկաթբետոնի, ասֆալտի, էլեկտրական լարերի, գործարանների հետ: Չէի՞ն կորչի արդյոք Անիի հեքիաթային ուրվագծերը, Կաթողիկեի սլացիկ մարմինը՝ խրոխտ կանգնած որպես Պարթեւոն՝ Ախուրյանի ուղղաձիգ ժայռերի գլխին. ինչպիսի՞ն կլիներ Ախուրյանի ձորի անվրդով գեղեցկությունը:

Կունենայի՞նք, արդյոք, միջնադարյան Անին: Աղաչանքս է՝ չմտածեք, թե ես գոհ եմ նրա այժմյան վիճակից, որ նա ավերակ է ու անմարդաբնակ:

Անին, որպես միջնադարյան քաղաք, չաղավաղված ժամանակի ընթացքում անխուսափելի վերակառուցումներով, իրար վրա կուտակված կառուցվածքների զանգվածներով, կանգնած այնպես, ինչպիսին որ եղել է յոթ դար առաջ հազվագյուտ երեւույթ է մարդկության մշակույթի պատմության մեջ:

Բայց խորը, շա՞տ խորը, մինչեւ արցունքներիս ակունքները, ցավում եմ, որ նա այսօր որք է, մեր ժողովրդի, նրա անմիջական եւ միակ ժառանգների սեփականությունը չէ, որ այնտեղ չեն պտտվում մեր նկարիչներն ու ճարտարապետները, մեր գրողներն ու գիտնականները, մեր երիտասարդ սերունդը, որ այնքա՞ն ուսանելու բան կգտներ Անիում. ցավում եմ, որ չենք քայլում նրա փողոցներով, չենք վայելում:



«Անի» հյուրանոցը Ախուրյանի ափին՝ Անի քաղաքի ավերակների դիմաց. նախագիծ

Ես ցավում եմ, որ Անիի չպեղված հսկայական հարստությունը մնացել է հողակույտերի բլուրների տակ: Որ միայն մեկ փողոց է մաքրվել, այն էլ՝ կիսատ-պռատ, որ նրա հրապարակներն ու բնակելի շենքերը, նրա քանդակները, նրա ստեղծած շատ ու շատ հրաշալիքները մնացել են հողի տակ: Սուր, շատ սուր ցավ եմ զգում, երբ աչքիս առաջ մի կողմից բնությունը, մյուս կողմից նրանց այսօրվա բռնատերերը ժամ առ ժամ քանդում, քարուքանդ են անում այդ կառույցները: Ցավում եմ, որ չենք կարող վերականգնել, հետագա քայքայումից պահպանել, ապահովել, խնամել այդ կոթողները, որ մաշվում, հափշտակվում, ոչնչացվում են վայրագ բարբարոսությամբ:

Անին հայ ժողովրդի գրված ու չգրված պատմության մեջ գրավում է արտակարգ տեղ: Հապճեպ հայացք եմ ձգում ցուցափեղկերի տակ դասավորված գրականությանը՝ նվիրված Անիին: Միայն այս տարի լույս է տեսել երեք ստվար գիրք:

Իսկ ինչքա՞ն բան կա, որ մենք չգիտենք. թաղված են եւ մագաղաթներից կազմված գրքերում, եւ այն հողերի տակ, որոնք այսօր անմատչելի են, բերդակալված, կրակ ու բոցով մեզնից բաժանված:

Բայց մեծ է, շա՞տ մեծ է շունչը Անիի. նա մարելուց յոթ դար հետո՝ այսօր էլ ճառագայթում է ռադիոակտիվ նյութի նման, սփռում իր իմաստության ու գեղեցկության շողերը:

Ու նայում եմ ես ահա այս ափից՝ հեռվում, աչքիս առաջ տարածված մեր հին մայրաքաղաքի համայնապատկերին՝ բզիկ-բզիկ արված ու տեսնում, թե այդ կիսավեր կոթողների մնացորդներն անգամ վեր են խոյացած հպարտ ու հմայիչ՝ երեմնի գեղեցկուհու ողջ գրավչությունը պահպանելով եւ ավելի մեծ ցանկություն առաջ բերելով՝ տեսնել նրանց, գրկել ու շոյել ամեն մի քարը, աչքերով ու մտքով կլանել նրանց հզորությունն ու իմաստությունը՝ նրանց գեղեցկության գաղտնիքների ակունքները փնտրելով: Ու երբ վերադառնում եմ մայրաքաղաք, տեսնում եմ Երեւանի մեծ հրապարակում Անիի ճառագայթը վերստին մարմին առած. ահա կառավարական տունը՝ կաթողիկեի նման խրոխտ ու հոյակապ, որ բարձրացել է՝ գոչելով, թե Անին հայի սրտում ու մտքում չի մեռել, ահա ծնել է ժառանգ մի պատանի, որ հսկայի նման բարձրացել է, տարածվել է, դարձել լայն պողոտաներ, վարդագույն շենքերով պճնվել, կանաչներով բարուրվել, պահպանել նրա անունն ու պատիվը, կեցվածքն ու լեզուն...

Չէ, Անին չի մեռել, նա հավերժական կյանք ունի իր ժողովրդի սրտում եւ արվեստի մեջ:

ՈՒԽՏԻ ՕՐ ՆՈՐԱՎԱՆՔՈՒՄ

Նորավանքի ուխտի օրը, որ ընտրվեց Կանաչ կիրակին, այս տարի մայիսի 7-ին էր: Սյունյաց թեմի հոգածությամբ այս առիթով Նորավանքում մատուցվեց Սուրբ Պատարագ՝ ձեռամբ Տ. Հովնան արք. Տերտերյանի, մասնակցությամբ Սյունյաց թեմի հոգեւոր դասի եւ Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարանի ավագ լսարանների սաների: Պատարագից հետո վանքի բակում հավաքված բազմաթիվ հավատացյալներին եւ հյուրերին դիմեց Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը՝ Վայոց ձորի բնակիչներին կոչ անելով տեր կանգնել հայոց հնամյա վանքերին ու եկեղեցիներին: Նա միաժամանակ երախտագիտության խոսք ուղղեց Ս. Աստվածածին եկեղեցու նորոգման բարերարներ տեր եւ տիկին՝ Տիգրան եւ Դիանա Հաճեբյաններին, որոնք մտադիր են շարունակել հովանավորչությունը նաեւ Նորավանքի ընդհանուր բարեկարգման ուղղությամբ:

Այնուհետեւ ելույթ ունեցան Տ. Հովնան արք. Տերտերյանը, որը ներկաներին փոխանցեց Ամենայն Հայոց կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ-ի պատգամը, Տ. Մեսրոպ արք. Աշճյանը, Դիանա Հաճեբյանը: Ապա տեղի ունեցավ մատաղի օրհնություն, որին հաջորդեց համերգային մասը: Վանքի բակում գործում էր նաեւ գեղանկարչական աշխատանքների ցուցահանդես:

Սյունյաց թեմի առաջնորդարան

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ՈՒԺ Է ՍՏԱՆՈՒՄ

Քրիստոս յարեաւ ի մեռելոց, ձեզ եւ մեզ մեծ աւետիս:

Այսպես ողողանջեցին զանգերը, եւ այսպես ողջունեցինք միմյանց ապրիլի 23-ին՝ հրաշափառ Հարության տոնին: Վաղ առավոտից մարդաշատ էին հայոց բոլոր եկեղեցիներն ու վանքերը: Այսպես էր նաեւ Երեւանի Կաթողիկե Սուրբ Աստվածածին եկեղեցում: Պատարագի ավարտից հետո էլ ժողովուրդը չէր շտապում հեռանալ: Կաթողիկե Սուրբ Աստվածածին եկեղեցում ավանդական են դառնում բարեգործական միջոցառումները: Այդ օրն անակնկալ մատուցվեց հատուկ տիպի թիվ 288 մանկատան երեխաներին: Եկեղեցու բակում գցվեցին սեղաններ, բաժանվեցին ներկված հավկիթներ, մատաղ, բաղցրավենիք:

Իսկ «Սասուն» երգի-պարի ազգագրական մանկական համույթը պատրաստել էր գեղեցիկ ներկայացում՝ նվիրված Սուրբ Զատկին:

Ապա ժողովրդական երգն ու պարը, սրամիտ հանելուկներն ու խաղիկները հաջորդեցին միմյանց՝ ներկաներին պարգեւելով գեղարվեստական մեծ հաճույք: Աշխույժ եռուզեռը բավական երկար տեւեց: Այսօր շնորհակալություն ենք հայտնում միջոցառման հովանավորներին ու կազմակերպիչներին, եկեղեցու հոգեւոր հովիվ Ավետիս քահանա Դանիելյանին եւ նրա ընկերներին, որոնց աջակցությամբ երեխաները ստացան զատկական այս նվերը:

Կարինե Առաքելյան

ՅՈՒՅՑԱՀԱՆԴԵՍ-ՄՐՅՈՒՅԹ

Ապրիլի 28-ին Երեւանում՝ ՄԱԿ-ի գրասենյակի ցուցասրահում, կազմակերպվեց մրցույթ-ցուցահանդես՝ նվիրված Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակին: Ներկայացված էին երիտասարդ արվեստագետների գործեր: Մրցույթ-ցուցահանդեսին ՔԴՔԿ-ի վարիչ-տնօրեն Տ. Մակար վրդ. Հովհաննիսյանի հանձնարարությամբ ներկա գտնվեց Արա սրկ. Նալչաջյանը, որը ՔԴՔԿ-ի կողմից ողջունեց ցուցահանդես-մրցույթի կազմակերպումը եւ մասնակցեց դրան՝ իբրեւ հյուրի անդամ:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՓՈՍՏԻՑ

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Տասնութ տարի է, ինչ ապրում եմ մորս հետ՝ առանց հոր: Այս տարիներին ապրել ու սովորել եմ խիստ ծանր պայմաններում: Երազում էի ընդունվել բուհ, դառնալ պատմաբան: 1999 թ. դպրոցն ավարտեցի գերազանց գնահատականներով եւ բախտս փորձեցի Երեւանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմա-իրավագիտական ֆակուլտետում: Սակայն պետպլանով նախատեսված անվճար տեղերի սակավ լինելու պատճառով ընդունվեցի նշված ֆակուլտետի վճարովի համակարգը: Ավա՜ղ, ընդամենը ընդունվեցի: Ուրախությունս ակնթարթորեն փոխվեց տխրության. ուսման վարչ պետք է վճարեինք, որն անհնարին էր մեզ համար, որովհետեւ ուսուցչուհի մորս չնչին վաստակը չէր հոգում մեր անգամ օրվա ապրուստը: Մի՞թե ես իրավունք չունեի սովորելու, մի՞թե մեր օրոյա կյանքի եւ առկա օրենքների դաժան դրվածքները պիտի սպանեին իմ երազները՝ անկախ իմ գիտելիքներից, ընդունակություններից ու ջգրոմներից: Ապրելն ինչ համար մահու չափ ծանր էր:

Չնայած սկսվել էին դասերը, բայց ես ինստիտուտ չէի հաճախում, որովհետեւ վճարի մասին հույսի շող չունեինք: Իմ եւ մորս աչքերը չէին չորանում արցունքներից: Գիշեր ու ցերեկ Աստված էինք կանչում:

Այո՛, միայն Աստծո գործին նվիրյալ մարդը կարող էր մեզ սատար լինել, հասկանալ, կարեկցել եւ օգնել:

Եվ գտնվեց այդ մարդը, մարդ, որի անունը դարձյալ մեզ հարազատ ու սիրելի: Իմ անչնչական ուրախության մեջ հայտնվեց մեկ այլ նրբերանգ, որով նաեւ հպարտ եմ: Դա այն միտքն էր, որ իմ կյանքի դժվարին պահին ինչ սատար կանգնեց իմ Եկեղեցու հայրերից մեկը՝ Սյունյաց թեմի առաջնորդ Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը, որին եւ ուզում եմ ուղղել իմ եւ մորս երախտագիտության խոսքն ու որդիական սերը:

Մերաբյա Իսրայելյան

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոն
Գրանցման վկայական՝ 624, **Դասիչ՝** 69333
Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբոլցյան
Խմբագրության հասցեն՝ ք. Վաղարշապատ, Ս. Գայանե եկեղեցի, Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոն
Հեռախոս՝ **(0+59) 56780**
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Ստորագրված է տպագրության՝ 15. 5. 2000 թ. **Տպաք.՝ 2500** **Գինը՝ 50 դրամ**